EUROEAST CULTURE

REGIONAL CO-OPERATION RCCHD FOR CULTURAL HERITAGE DEVELOPMENT

ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ

ՕԺԱՆԴԱԿ ՁԵՌՆԱՐԿ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ

ՕԺԱՆԴԱԿ ՁԵՌՆԱՐԿ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

EUROEAST CULTURE

REGIONAL CO-OPERATION RCCHD FOR CULTURAL HERITAGE DEVELOPMENT

Նախագիծը ֆինանսավորվել է
Եվրոպական միության կողմից

ԵՐԵՎԱՆ
2014

The present manual is prepared by ICOMOS/Armenia within the framework of the project "Regional Co-operation for Cultural Heritage Development" of the Eastern Partnership Culture Programme.

The lead partner of the project
Georgian National Union of the International Council on Monuments and Sites (Georgia)

Partners
ICOMOS/Armenia (Republic of Armenia)

"Architectura I Prestizh" (Ukraine)

"Riksantikvaren" (Norway)

ICOMOS/Armenia is the national committee of International Council on Monuments and Sites. It is a non-governmental organization of professionals aimed at preservation, legislative protection, reconstruction and conservation of the monuments and sites.

ICOMOS / Armenia

0010, Yerevan, 1/3, Pavstos Buzand Street
Tel.: + (374)93730818, e-mail: icomos_armenia|@mail.ru

Սույն ձեռնարկը պատրաստվել է ԵՄ Արևելյան գործընկերության ՄԾԱԿՈՒՅԹ ծրագրով իրականացվող «Տարածաշրջանային համագործակցություն հանուն մշակութային ժառանգության զարգացման» նախագծի շրջանակում՝ «ԻԿՕՄՕՍ/Հայաստան» հասարակական կազմակերպության կողմից:

Նախագծի գլխավոր գործընկեր՝
«ԻԿՕՄՕՍ/Վրաստան» կազմակերպություն (Վրաստան)

Գործընկերներ՝
«ԻԿՕՄՕՍ/Հայաստան» կազմակերպություն (Հայաստան)

«Architectura I Prestizh» (Ուկրաինա)

«Riksantikvaren» (Նորվեգիա)

ԻԿՕՄՕՍ/Հայաստանը Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդի Հայաստանի ազգային կոմիտեն է: Այն պրոֆեսիոնալների հասարակական կազմակերպություն է՝ նպատակաուղղված հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանությանը, օրենսդրական պաշտպանվածությանը, վերականգնմանը և ամրակայմանը:

ԻԿՕՄՕՍ / Հայաստան

0010, ք. Երևան, Փավստոս Բուզանդի փող. 1/3
Հեռ.՝ (374 93) 73 08 18, e-mail: icomos_armenia@mail.ru

Dear teachers!

The present manual is prepared within the framework of the project "Regional Co-operation for Cultural Heritage Development" of the Eastern Partnership Culture Programme implemented in Armenia in 2012-2014 and funded by the European Union.

Within the framework of the current project which has an educative orientation 18 educational seminars were organized by ICOMOS/Armenia in close collaboration with "Erebuni" Historical and Archaeological Museum-Reserve of Yerevan City. All the groups of the seminar participants - pupils of comprehensive schools, school teachers and members of local authorities - took great interest in the problems concerning the awareness of cultural heritage and its preservation, thus affirmig the necessity of such a manual.

Taking into consideration the international, particularly European experience in teaching about the cultural heritage at school, we have striven to create an education source which could be regarded as basis not only by school teachers but also by those who are interested in this field and are conscious of their responsibility for the preservation of the heritage.

Although the publication of the manual marks the termination of the project "Regional Co-operation for the Cultural Heritage Development" in Armenia, but we consider it as an outstanding contribution to the education of the next generations and the awareness raising of the social value of the heritage. Hopefully this will come true!

ICOMOS/Armenia NGO

Միրելի ուսուցի՛չ

Սույն ձեռնարկը պատրաստվել է ԵՄ Արևելյան գործընկերության ՄՇԱԿՈՒՅԹ ծրագրով 2012-2014թթ. Հայաստանում իրականացվող «Տարածաշրջանային համագործակցություն հանուն մշակութային ժառանգության զարգացման» նախագծի շրջանակում՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

Կրթական ուղղվածություն ունեցող սույն նախագծի շրջանակում «Մշակութային ժառանգություն. պահպանել անցյալը հանուն ապագայի» և «Հնագիտական ժառանգություն. Էրեբունի» թեմաներով Երևանի քաղաքապետարանի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի գործընկերությամբ «ԻԿՕՄՕՍ/Հայաստան»-ի կողմից կազմակերպված 18 ուսուցողական սեմինարներին մասնակից բոլոր խմբերը՝ հանրակրթական դպրոցների աշակերտներ, դպրոցական ուսուցիչներ և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, դրսևորեցին չափազանց մեծ հետաքրքրություն դեպի մեր ժառանգության ճանաչողությունը և պահպանության խնդիրները՝ հաստատելով նման ձեռնարկ ունենալու անհրաժեշտությունը:

Ելնելով դպրոցներում ժառանգության դասավանդման միջազգային և, մասնավորապես, եվրոպական փորձից՝ մենք ջանացել ենք կազմել հնարավորինս պարզ ու մատչելի աղբյուր, որը ելակետ կարող է հանդիսանալ ոչ միայն դպրոցների ուսուցիչների, այլ նաև բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են այս բնագավառով և գիտակցում են ժառանգության պահպանության պատասխանատվության սեփական բաժինը:

Ձեռնարկի հրատարակությունը թեև ազդարարում է «Տարածաշրջանային համագործակցություն հանուն մշակութային ժառանգության զարգացման» նախագծի ավարտը Հայաստանում, սակայն այն, անկասկած, մենք գնահատում ենք իբրև արժեքավոր ներդրում՝ ապագա սերնդի կրթության և ժառանգության հասարակական արժեքի գիտակցման գործում: Լիահույս ենք, որ այդպես էլ կլինի:

«ԻԿՕՄՕՍ/Հայաստան» կազմակերպություն

Առաջաբանի փոխարեն

Մենք համարում ենք, և մեր աշխատանքային ու մասնագիտական փորձն այդ է փաստում, որ դպրոցն է այն վայրը, ուր աշակերտի մոտ պետք է ծնվի հետաքրքրություն և խանդավառություն դեպի անցյալը, ներկան և ապագան՝ անգերազանցելի մի գործիքի՝ մշակութային և բնության ժառանգության միջոցով: Մյուս կողմից, պարզ ճշմարտություն է, որ այսօրվա դպրոցականն է վաղը դառնալու մեր ժառանգության պահապանը:

Ուստի, ձեռնամուխ լինելով այս ձեռնարկի ստեղծմանը, լիահույս ենք, որ այն կօգնի հանրակրթական դպրոցին՝ ապագա քաղաքացու, այսպես կոչված, «ինքնության կազմում» կարևորել ժառանգության տեղն ու դերը, ինչպես նաև, ավելի ու ավելի մեծ թվով երիտասարդների կկողմնորոշի դեպի ժառանգության պահպանությունը:

Իսկ այդ ժառանգությունն ամենաբազմազան տեսակներով ներկա է մեր կյանքում. նյութական (հուշարձաններ, շենքեր և շինություններ, արվեստի գործերի և առարկաների հավաքածուներ, ձեռագրեր, արխիվներ և այլն), ոչ նյութական (կենսակերպ, հմտություններ, հավատալիքներ ու ծեսեր, լեզուներ և այլն), բնության (կենդանական, բուսական աշխարհ, օգտակար հանածոներ և այլն):

Ուսուցչի խնդիրն է՝ ապագա քաղաքացուն կրթել այն միջավայրում, որտեղ նա ապրում է՝ տեսանելի դարձնելով այդ միջավայրի գեղարվեստական, պատմական և մշակութային դրսևորումները, պատմական հիշողության փոխանցման միջոցով ձևավորել վարքագիծ այդ միջավայրի և ժառանգության նկատմամբ: Եվ վերջապես, սեփական ժառանգության հետ հանդիպումը աշակերտի համար դարձնել ելակետ՝ համաշխարհային ժառանգության հետ ծանոթությունից առաջ:

Գագիկ Գյուրջյան

ԻԿՕՄՕՍ / Հայաստանի նախագահ

Դպրոցականն ու իր ինքնության ձևավորման ճանապարհը ժառանգության միջով



Թեմա 1

Ի՞նչ է ժառանգությունը և ինչո՞ւ այն պահպանել

«Ժառանգություն» հասկացության ձևավորումը. թռիչք ժամանակի միջով

19-րդ դարից ի վեր «ժառանգություն» հասկացությունը նույնացվել է միայն հուշարձանների և պատմական վայրերի հետ: Եվ եթե անգամ, խնդիր է դրվել ժառանգությունը ներառել կրթական ծրագրերում, ապա այն միայն ընդունել է դեպի հուշարձաններ ու թանգարաններ պասիվ այցելությունների ձև: Ու միայն անցյալ դարի 70-ականներից ժառանգությունն ավելի ու ավելի գրավեց հասարակության ուշադրությունը՝ առավել լայն իմաստով: Այդօրինակ հետաքրքրության աճին մեծապես նպաստեցին նաև դեպի պատմական վայրեր ու հուշարձաններ Եվրոպայով մեկ կազմակերպվող բաց դռների օրերը: Դեպի մշակութային ժառանգությունը գիտակցություն ձևավորելու ջանքերն այնքան ընդլայնվեցին, որ վերջին տասնամյակում մոտեցան նաև ոչ նյութական ժառանգության ճանաչման խնդրին՝ ժողովրդական հեքիաթներ, երաժշտություն, ավանդություններ, բնապատկեր և այլն: Մի խոսքով, ժամանակակից հասարակությունն ուզում է առաջ շարժվել՝ հասկանալով անցյալը:

«ժառանգություն» ասելով, առաջին հերթին, հասկանում ենք մի բան, որը մենք ժառանգել ենք, և այն մեզ է անցել մեր նախորդներից: Սակայն, ի տարբերություն անձնական ժառանգության, մշակութային ժառանգությունն ունի հասարակական կարևորություն և պատկանում է հասարակությանը:

«Ժառանգությունը հիշողության միջոցով մեզ կրկին այցելող պատմությունն է»:

Պիեռ Նորա

Ամեն մի ժառանգություն, ի վերջո, ստեղծվում է որևէ երկրում ու ձևավորում է այս կամ այն ժողովրդի կամ ազգի մշակութային ինքնությունը: Ժառանգությունն, այսպիսով, ազգային հպարտության ճանապարհ է, որի նշանառությունը անցյալն է, և որը մեզ տարբերում է ուրիշներից:

Ժառանգությունը կարելի է բնորոշել նաև որպես «շարժական տոն»: Այն, իսկապես, դինամիկ բաժանարար է անցյալի ու ներկայի միջև, որը, թեև ստեղծվել է անցյալում, բայց շարունակում է փոխել մեր կյանքը: Ժառանգությունն օգնում է կառուցել ներկան՝ անցյալից չկտրվելով: Ուրեմն շատ կարևոր է ըմբռնել **անցյալ-ներկա-ապագա** շղթան:

Սակայն, ինչպե՞ս դասավանդել ժառանգությունը. իսկապես, ի՞նչ ենք մենք ասում մեր երեխաներին, երբ խոսում ենք ժառանգության մասին: Չէ՞ որ մի քանի բառով սեղմել այս բնագավառը ևս դժվար է: Հատկապես, երբ ժառանգությունն այսօր էլ ներկա է մեր ամենօրյա կյանքում:

Ժառանգությունն անփոխարինելի արժեքներից բաղկացած հոգևոր, մշակութային, տնտեսական և սոցիալական կապիտալ է:

Բնական ռեսուրսների նման, այն ևս հանդիսանում է ազգային ինքնահարգանքի ձևավորման և աշխարհի կողմից ճանաչված լինելու հիմքը:

Ժառանգության ավանդական տիպերը



Նյութական Ժառանգության օրինակներ

Նյութական ժառանգությունը բաղկացած է հիմնականում մեզ շրջապատող բնապատկերից, ճարտարապետական և քաղաքաշինական կառույցներից, հնագիտական և երկրաբանական նշանակություն ունեցող վայրերից, գյուղատնտեսական կամ անտառային նշանակության տարածքներից, արվեստի շարժական առարկաներից, արդյունաբերական ժառանգության տարրերից՝ կառույցներ, գործիքներ, մեքենաներ և այլն:

Ոչ նյութական ժառանգության օրինակներ

Ոչ նյութական ժառանգությունը վերաբերում է ամենատարբեր ոլորտների՝ երգ, պար, սովորույթներ, գաստրոնոմիկ ավանդույթներ, խաղեր, առասպելներ, հեքիաթներ ու լեգենդներ, փոքրիկ արհեստներ, հմտություններ և այլն:

Բնության ժառանգության օրինակներ

Բնության ժառանգությունը, ինչպես և մշակութայինը, համընդհանուր արժեք է: Ի տարբերություն մարդու կողմից ստեղծված ժառանգության, այն անձեռակերտ է և արդյունք է բնության մեջ տեղի ունեցող էվոլյուցիայի: Այն կարող է լինել նաև մարդու և բնության փոխգործունեության արդյունք:

«Բնությունը դա մի գիրք է, որը պետք է կարդանալ կարդալ և ճիշտ հասկանալ: Նրան սխալ հասկանալը մեծ վնաս է բերում»:

Միխայել Նալբանդյան

Մի քանի դիտարկումներ

Ըստ ֆիզիկական չափորոշիչների՝ գոյություն ունեն ժառանգության տարբեր տիպեր: Ավանդաբար մենք կարող ենք տարբերակել 2 տիպի ժառանգություններ՝ նյութական և ոչ նյութական: Նյութական ժառանգությունն իր հերթին բաժանվում է անշարժ և շարժական ժառանգություններ: Ընդ որում, անշարժ ժառանգությունը ևս, թեև դանդաղ, բայց կարող է փոխվել: Ընդհանուր առմամբ, պատկերը հետևյալն է.

Մշակութային ժառանգություն			Բնության ժառանգություն
Նյութական		Ոչ նյութական	Նյութական և անշարժ
Անշարժ	Շարժական		
հնագիտական վայրեր, պատմական բնակավայրեր, բնակավայրերի պատմական կենտրոններ, հուշարձաններ, պաշտամունքային, ամրաշինական, ճարտարապետական, ինժեներական կառույցների համալիրներ, մշակութային լանդշաֆտներ, պատմական այգիներ, արդյունաբերական կառույցներ և այլն	թանգարանային հավաքածուներ, գրադարանների և արխիվների հավաքածուներ	արհեստներ, հմտություններ, ծեսեր, բարքեր, տոներ, հավատալիքներ, ժողովրդական պատմություններ, պար, երաժշտություն, թատրոն և այլն	երկրաբանական և ֆիզիկական կազմավորումների և կենսաբազմազանության տեսանկյունից գիտական կարևորություն ներկայացնող տարածքներ, բնության արգելավայրեր, առանձնակի գեղատեսիլությամբ աչքի ընկնող բնության հուշարձաններ և տարածքներ

Այսպիսի աղյուսակները թեև օգտակար, բայց հարաբերական են, որովհետև նյութական ու ոչ նյութական ժառանգությունները սերտորեն կապված են մեկը մյուսին: Կարելի է բերել շատ պարզ օրինակ՝ այն գորգը, որն այսօր էլ Ձեր տանն է, Ձեր ընտանիքը ժառանգել է դեռ մեծ տատից: Գորգը, բնականաբար, արժի պահպանել, որովհետև այն գործածել են Ձեր մեծ տատն ու պապը, գորգն ունի որոշակի տարիք և, վերջապես,

գորգագործությունը հնագույն արհեստ է: Այս պարզ առարկան, անկասկած, թաքցնում է նաև այլ պատմություններ՝ ո՞վ է գորգի հեղինակ-վարպետը, ինչպե՞ս է այն դեռևս պահպանվում Ձեր ընտանիքում և այլն: Այս ամենը առարկայի նկատմամբ մեծացնում է հետաքրքրությունը, և այն ձեռք է բերում **արժեք**: Հաճախ մշակութային առարկաների հետ կապված պատմություններն առավել արժեքավոր են, քան առարկան ինքը: Առարկայի կենսագրությունը, կարծես, կենդանություն է հաղորդում դրան: Այսօրինակ անթիվ պատմություններ կան՝ հուշարձանն ու իր պատմությունը, գիրքն ու իր ընթերցողները, գեղանկարը և իր հեղինակն ու սեփականատերերը և այլն: Այս պատմությունների ամբողջությունը դառնում է մեր փողոցի, քաղաքի, երկրի մշակութային պատմությունը:

Ժառանգությունը կարելի է դասակարգել նաև ըստ մեր կյանքի ոլորտների՝ պաշտամունքային, ռազմապաշտպանական, ինժեներական, արդյունաբերական, բնակելի, սպորտային, ժամանցային, արվեստի և այլն: Ժառանգության բազմաճյուղությամբ է պայմանավորված նաև տարբեր ուղղվածության թանգարաններ ունենալը՝ արվեստի պատկերասրահներ, ժողովրդական արվեստի թանգարաններ, խաղալիքների թանգարաններ, հնագիտական և այլն:

Ինչպես ենք մենք ներկայացնում ժառանգությունը

Թանգարաններ

Թանգարանը հավաքում, պահպանում և ուսումնասիրում է արժեքավոր առարկաներ: Այդ առարկաներն արժեքավոր են, քանի որ եզակի են կամ հազվագյուտ, գեղեցիկ, առանձնահատուկ կամ հին: Այդ առարկաներն օգնում են հասկանալ պատմությունը՝ այս կամ այն թեմայի շրջանակում: Ամեն մի թանգարան ցուցափեղկերի տակ է դնում իր հավաքածուները և հասարակությանն է ներկայանում ցուցահանդեսներով, կոնֆերանսներով և կամ այլ միջոցառումներով: Կան տարբեր ուղղվածության թանգարաններ՝ արվեստի, պատմության, հնագիտության, բնության, լուսանկարի թանգարաններ և այլն:

Արխիվներ

Արխիվները պահպանում են նյութեր ինչպես մարդկանց, այնպես էլ կազմակերպությունների ու հաստատությունների մասին: Արխիվներն այդ նյութերը ոչ միայն պահպանում են, այլ նաև մշակում և դարձնում են մատչելի հասարակության համար:

Ոչ նյութական ժառանգությունը ժողովրդական մշակույթում

Ոչ նյութական մշակույթը վերաբերում է ժառանգության այն բոլոր տիպերին, որը հնարավոր չէ շոշափել: Այն կարող է վերաբերել պատմություններին, ականատեսների վկայություններին, սովորույթներին ու ավանդույթներին, ծեսերին, երգ ու պարին, տարազին կամ անգամ որևէ երկրի ազգային հավաքականի համազգեստին: Մարդիկ մշտապես սնվում են ոչ նյութական մշակույթից թե՛ խոսքով, և թե՛ իրենց գործողություններով: Այլ բառով, ոչ նյութական ժառանգությունը կարող է կոչվել նաև **ավանդական կամ ժողովրդական մշակույթ**, կարելի է նույնիսկ օգտագործել **ազգագրություն** տերմինը: Ոչ նյութական մշակույթը մշտապես փոփոխման է ենթարկվում և հաճախ շատ դժվար է գտնել դրա ակունքները:

Հուշարձաններ

Հուշարձաններ հասկացության տակ հիմնականում հասկացվում են շենքեր, սակայն կարող են լինել նաև շինություններ՝ կամուրջներ, կոթողային հուշարձաններ, եկեղեցիներ, դարպասներ և այլն: Հուշարձանը կարող է ստեղծված լինել վերջերս, սակայն կարող է ունենալ նաև խիստ

պատկառելի տարիք: Ամեն հուշարձան ունի իր պատմությունը՝ կապված իր ճարտարապետության, շրջակա միջավայրի և բնակիչների հետ: Ահա թե ինչու՝ **հուշարձան** հասկացությունը հատուկ կարգավիճակ է, և հուշարձանները ենթակա են պահպանության: Հուշարձանն ինքն է պատմում այն վայրի պատմությունը, որտեղ գտնվում է: Քիչ չեն դեպքերը, երբ վայրը դառնում է հայտնի՝ հուշարձանի պատճառով:

Տեղանքաքարտեզներ (լանդշաֆտ)

Մեզ շրջապատող տեղանքի պատկերը՝ լանդշաֆտը, ձևավորվել է մեր նախնիների կողմից և կրում է նրանց դրոշմը: Այն ունի հատուկ որակ և բնութագիր, որով և ճանաչելի է՝ հատուկ մտածված ճարտարապետություն, հողաբաժանում, բնության տարրեր (դաշտեր, մարգագետիններ, առուներ), արդյունաբերության հետ կապված ենթակառուցվածքներ, տրանսպորտային և հաղորդակցության ճանապարհներ և այլն: Քաղաքների և գյուղերի բարետես տեսարանները ևս ընդգրկվում են լանդշաֆտ հասկացության մեջ: Պետք է տարբերակել նաև **բնական լանդշաֆտ** հասկացությունը, որը կերտել է բնությունն ինքը, և որը պետք է հնարավորինս չխաթարել:

Ե՞րբ է ինչ-որ բան դառնում մշակութային ժառանգություն. *հինգ պայմաններ*

Մշակութային ժառանգության տիպերը բազմաթիվ են ու տարբեր: Տարբեր է նաև այն մարդկանց թիվը, ովքեր ոգեշնչվում են այդ ժառանգությամբ: Այդ դեպքում, ե՞րբ ենք մենք ինչ-որ բան համարում **մշակութային ժառանգություն**:

1 Երբ այդ «ինչ-որ բանին» մենք տալիս ենք **կարևորություն և արժեք**՝ առանց նույնիսկ խորանալու բովանդակության կամ տնտեսական նշանակության մեջ:

2 Երբ այդ «ինչ-որ բանը» ունի **հասարակական կարևորություն և արժեք**:

Ընդունված է համարել, որ մշակութային ժառանգությունն, այսպես կոչված, «անցյալի դեսպանն» է: Այն ներառում է մեծ ու փոքր պատմություններ, որոնք կարող են կապվել ամենօրյա կյանքի հետ: Այդ պատմությունները կարող են լինել հերոսական, մտահոգիչ, զվարճալի և անգամ անհանդուրժելի: Այդ պատմություններից ամեն մեկը լինելով առանձին պատմություն՝ թույլ է տալիս անցնել պատմության միջով: Ինչպես Ցիցերոնն էր ասում՝ «Նա, ով չգիտի, թե որտեղից է գալիս, միշտ մնում է երեխա»: Այսինքն, մեր երեխաներին մեծացնելիս և դաստիարակելիս՝ մենք ևս պարտավորություն ունենք ասելու, թե որտեղից ենք գալիս: Եվ այստեղ մեզ օգնում է մեր ժառանգությունը՝ հասկանալ անցյալը և ըմբռնել ներկան: Ժառանգությունն օգնում է նաև հասկանալ ուրիշներին: Ժառանգությունը կարող է նաև խրախուսել մշակույթների փոխանակություններ՝ կոտրելով աշխարհագրական և ժամանակագրական սահմանները: Ու քանի որ ժառանգությունն այդօրինակ ուժ և արժեքային զգացողություն է հաղորդում մարդուն՝ ամեն ոք իրավունք ունի օգտվել այդ հարստությունից, ավելին՝ ունի այն պահպանելու և ապագա սերունդներին հանձնելու պատասխանատվություն:

3 Երբ այդ «ինչ-որ բանը» ունի **պատմական կարևորություն և արժեք**:

Ինչպե՞ս չափել որևէ բանի պատմական նշանակությունը: Դրա համար մենք դիմում ենք պատմության, արվեստի պատմության, ազգագրու-

թյան, հնագիտության, ճարտարապետության և այլ դիսցիպլինների օգնությանը, համադրում ենք ստացված տեղեկատվությունները և հասկանում պատմության ընթացքը: Օրինակ, տարբեր դարաշրջաններում օգտագործված շինանյութի ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տալիս ճամփորդել հեռավոր անցյալով, որից մեզ է հասել միայն շինանյութը: Ծիսական առարկաները, շենքերը, հնագիտական գտածոները օգնում են լրացնելու մեր գիտելիքները անցյալի հասարակությունների վերաբերյալ: Բոտիչելիի, Գոյայի գեղանկարչությունը մեզ թույլ է տալիս հասկանալ իր ժամանակաշրջանի գլխավոր գաղափարները: Այսինքն, ժառանգության պատմական արժեքն անվիճելի է: Այդ պատմական արժեքի շնորհիվ է նաև, որ այսօր ժամանակակից հասարակության մեջ ժառանգությունը ձեռք է բերել ֆինանսական արժեք:

4 Երբ այդ «ինչ-որ բանը» ձեռք է բերում **կարևորություն և արժեք որևէ անհատի համար**:

Անցյալի շատ հետքեր, իրականում, առանձին վերցրած, չունեն արժեք, ինչպես օրինակ՝ խճանկարի որևէ առանձին մասնիկ: Արվեստի գործերը կարող են լինել նշանավոր և արժեքավոր այն հավաքածուի շրջանակում, որի մասն են կազմում: Նույն կերպ, որևէ հավաքածու կարող է արժեք ձեռք բերել որևէ հանրահայտ ընտանիքի, որևէ քաղաքի պատմության համատեքստում: Մշակութային ժառանգության արժեքն անհամեմատ մեծանում է, երբ այն տեղակայվում է առավել լայն ու ընդգրկուն շրջանակում:

5 Երբ այդ «ինչ-որ բանին» հատուկ են դառնում **մշակութային զուգորդումները**:

Վերջապես, մշակութային ժառանգությունը կարևոր է նաև անհատական առումով: Մարդու կյանքը կարող է կապվել որևէ շենքի, երաժշտական կատարման կամ մի լուսանկարի հետ, որը նրան թանկ է ու հիշարժան: Կամ, օրինակ, մենք կարող ենք ունենալ նախընտրելի թանգարան, ուր պահվում են մեզ համար կարևոր իրեր: Այսինքն, ժառանգությունը պայմանավորում է նաև յուրաքանչյուրիս անհատականությունը:

Ինչո՞ւ է մշակութային ժառանգության պահպանությունը կարևոր.
դարձյալ հինգ պատճառներ

1 Մշակութային ժառանգությունը արտահայտում է տարբեր ուղերձներ և արժեքներ՝

- պատմական
- գեղարվեստական
- քաղաքական
- կրոնական
- սոցիալական
- հոգևոր
- գիտական

Այն որոշակի իմաստ և նշանակություն է հաղորդում մարդկանց կյանքին:

Հնագիտական վայրերը, հուշարձաններն ու թանգարանները մեզ պատմում են անցյալի մասին. դրանք մեզ փոխանցում են պատմական ուղերձ: Հիրոսիմայի հուշարձանը (Ճապոնիա) և կամ Մեծ եղեռնի հուշահամալիրը (Երևան) մեզ պատմում և հիշեցնում են պատմական ողբերգական իրադարձությունների մասին: Վանքերը, եկեղեցիները, մզկիթներն ու տաճարներն ունեն ոչ միայն կրոնական նշանակություն, այլ նաև ճարտարապետական, գեղարվեստական արժեք: Գեղարդի վանական համալիրը եզակի է ոչ միայն իր ճարտարապետությամբ ու ժայռափոր արվեստի օրինակներով (մատուռներ, խաչքարեր), այլ նաև բացառիկ գեղեցիկ բնական միջավայրով:

2 Մշակութային ժառանգությունը սոցիալական տարբեր խմբերի ինքնության ներկայացուցիչն է:

Ինչպիսին այս կամ այն ժողովրդի ժառանգությունն է (նյութական կամ ոչ նյութական), այնպիսին էլ այդ ժողովրդի ինքնությունն է: Քիչ չեն դեպքերը, երբ որևէ երկիր ճանաչվում է իր յուրօրինակ վայրերով ու հուշարձաններով. Իտալիան հայտնի է Պիզայի աշտարակով, Եգիպտոսը՝ բուրգերով, Միացյալ թագավորությունը՝ Շեքսպիրով, Հայաստանը՝ Մար-

տիրոս Սարյանով, Էջմիածնի Մայր տաճարով ու Մատենադարանով, Մոսկվան՝ Կրեմլի համալիրով և այլն:

3 **Մշակութային ժառանգությունը հաղորդակցության միջոց է, որը թույլ է տալիս ճանաչել ժողովուրդների բազմազանությունը, ինչպես նաև, օգնում է հասկանալ հանուն խաղաղության և փոխըմբռնման տարվող քաղաքականությունը:**

Մշակութային ժառանգությունն օգնում է ճանաչել ժողովուրդների միջև պատմականորեն գոյություն ունեցած կապերը և մշակութային փոխազդեցությունները:

4 **Մշակութային ժառանգությունը տնտեսական զարգացման աղբյուր է:**

19-րդ դարից ի վեր ժառանգությունը սկսել է հետաքրքրել ու գրավել ճանապարհորդել սիրողներին: Շատ երկրների համար մշակութային ժառանգությունը դարձել է կարևոր տնտեսական ռեսուրս՝ այդ երկրները դարձնելով տուրիստական (Հունաստան, Իտալիա, Կիպրոս, Եգիպտոս և այլն): Շատ երկրներ, անգամ չկարողանալով դիմագրավել անվերահսկելի զանգվածային տուրիզմը, մեծապես վնաս են հասցրել իրենց ժառանգության պահպանության որակին:

5 **Եվ վերջապես գլխավոր պատասխանը՝ մշակութային ժառանգությունը եզակի է և անփոխարինելի:**

Գործնական դաս - 1

Ժառանգության տիպերը

- Դասի նպատակն է օգնել աշակերտին ճանաչել ժառանգության տարբեր տիպերը
- Դասն ընթանում է դասարանում
- Դասը մեկնարկում է ժառանգության տիպերի մասին բացատրություններով (պատմական և բնական վայրեր, հուշարձաններ, արձաններ, թանգարանային հավաքածուներ և այլն)

- Աշակերտներին բաժանվում է հարցաշար-աղյուսակ, որը նրանք պետք է փորձեն լրացնել՝ համապատասխան սյունակում նշում կատարելով
- Այնուհետև, աշակերտների հետ կազմակերպվում է ազատ քննարկում. յուրաքանչյուրը ներկայացնում է իր ընտանիքում պահվող որևէ իր կամ պատմում այն պատմությունը, որը փոխանցվել է սերնդից սերունդ
- Ինչո՞ւ են այդ իրերը «արժեք» ձեռք բերել և համարվում թանկ:

Աղյուսակ 1

Անվանումը	Շարժական ժառանգություն	Անշարժ ժառանգություն	Ոչ նյութական ժառանգություն
Գորգ			✓
Հուշաղբյուր			
Կավե ջրանոթ	✓		
Էջմիածնի Մայր տաճար			
Երևանի Կաթոլիկ մզկիթ			
Էրեբունի ամրոց		✓	
Պատմական Արտաշատ			
Պար «Քոչարի»			
Վարդավառ			
Որմնանկար			
Խաչքար			
Երևանի Հանրապետության հրապարակ			
Օպերայի շենք			
Նորավանք			
Հայկական լավաշ			
Հայկական կոնյակ			
Երևանի կոնյակի գործարան			

Գործնական դաս – 2

Առաջին քայլերը ժառանգության առարկաների հետ աշխատանքում, ինչպե՞ս նկարագրել

- Դասի նպատակն է՝ օգնել աշակերտին ճիշտ կազմակերպել իր առաջին ընկալումները. ե՞րբ, ինչո՞ւ և ինչպե՞ս է ստեղծվել տվյալ առարկան
- Դասն ընթանում է դասարանում
- Ուսուցիչը պետք է իր տրամադրության տակ ունենա այն օրինակների լուսանկարները (ցանկալի է գունավոր), որոնց մասին խոսելու է
- Դասը մեկնարկում է այն նյութերի մասին խոսելով, որոնք գործածվում են ժառանգության առարկաներ ստեղծելիս՝ կավ, ապակի, փայտ, աղյուս, քար և այլն
- Աշակերտները բաժանվում են փոքրիկ խմբերի՝ 5 հոգանոց, և ամեն մի խմբի տրվում է 1 լուսանկար: Խմբի առաջադրանքը տվյալ առարկան նկարագրելն է և, մասնավորապես, հետևյալը.

1. ֆիզիկական հատկանիշները (ի՞նչ է սա, ի՞նչ գույնի է, բնական է, թե՞ պատրաստված ինչ-որ մեկի կողմից, ովքե՞ր են օգտագործել)
2. Նյութը (ի՞նչ նյութից է պատրաստված, պատրաստված է ձեռքով, թե՞ մեքենայի օգնությամբ)
3. Կիրառական նշանակությունը (ի՞նչ նպատակով է պատրաստվել, արդյո՞ք օգտագործվում է նաև այսօր)
4. Դեկորատիվ հարդարանքը (թեմատիկ է, թե՞ ոչ, ինչպե՞ս է հարդարված, արդյո՞ք այն պատրաստելը հեշտ է, համեմատություն այլ առարկաների հետ)
5. Արժեքը (ինչպե՞ս դու կարող ես գնահատել այս առարկան, որքա՞ն է դրա դրամական արժեքը, որտե՞ղ այն պետք է պահվի՝ տանը, թե՞ թանգարանում)
6. Յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի այն առարկայի նկարագրությունը, որը տրվել է իրեն:

Գործնական դասի համար առաջարկվող առարկաների օրինակներ



Գործնական դաս – 3

Քննարկում. մշակույթի և բնության փոխկապվածությունը

- Բնական միջավայրը մեծ դեր է խաղում՝ յուրաքանչյուր երկրի ազգային և տեղական ճարտարապետության ոճն ու կառուցապատումը ձևավորելիս
- Աշակերտի խնդիրն է նշել տարբերություններն իրեն առաջարկված 2 լուսանկարներից (շինանյութ, տանիք, գույն, հարկ և այլն)
- Լուսանկարներից մեկը կներկայացնի Հայաստանում կառուցված բնակելի տան, իսկ մյուսը՝ որևէ այլ երկրի ավանդական բնակելի տան օրինակ
- Աշակերտը պետք է նաև ինքնուրույն ծանոթանա այն երկրի բնությանն ու աշխարհագրական միջավայրին, որին վերաբերում է երկրորդ լուսանկարը՝ փորձելով հիմնավորել բնակելի տան ճարտարապետական մտահղացումը
- Առաջադրանքը աշակերտին տրվում է որպես տնային աշխատանք, որն այնուհետև ստուգվում է դասարանում:

Առաջարկվող լուսանկարներ [1]

Բնակելի տուն, Ֆինլանդիա

Գյուղական տուն, Էստոնիա[2]

1. Լուսանկարները վերցված են՝ www.coe.int/futuropa, N1/2008 և համացանցից
2. Լուսանկարը՝ ԻԿՕՍՕՍ / Էստոնիա

Բնակելի շենք, Երևան, Հայաստան

Բնակելի տուն, Քարթլիա, Վրաստան

Բնակելի տուն, Սանահին, Հայաստան

Բնակելի տուն, Սիբիր, Ռուսաստան

Բնակելի տուն, Նորմանդիա, Ֆրանսիա



Թեմա 2

Ինչպե՞ս կազմակերպել այցելություն ժառանգության վայրեր

Թեմայի շրջանակում սովորում ենք ինչպես կազմակերպել այցելություն ժառանգության վայրեր՝ հնավայր, եկեղեցական համալիր կամ մեկուսի կանգնած որևէ հուշարձան: Գերադասելի է ընտրել այնպիսի վայր, ուր պատմական և ճարտարապետական նշանակության մեկնաբանումից բացի, առկա են նաև պահպանության խնդիրներ:

Քայլ 1

Մինչ այլցելության կազմակերպումը՝ աշակերտներին ներկայացնել և մեկնաբանել պատմության և մշակույթի հուշարձանների բնագավառի հիմնական հասկացությունները:

- **հուշարձան/տեսարժան վայր**՝ ճարտարապետական, մոնումենտալ քանդակագործության և գեղանկարչության ստեղծագործություններ, հնագիտական բնույթի տարրեր կամ կառուցվածքներ, արձանագրություններ, անձավային կացարաններ, ձեռակերտ աշխատանքներ կամ մարդու և բնության համատեղ ստեղծագործություններ, ինչպես նաև, հնագիտական տեսարժան վայրեր ընդգրկող գոտիներ, որոնք արժևորվում են պատմության, արվեստի, գիտության, գեղագիտության, ազգագրության կամ մարդաբանության տեսանկյունից:
- **մշակութային արժեք**՝ հուշարձանի գեղագիտական, պատմական, գիտական, հասարակական և հոգևոր նշանակությունը՝ անցյալ, ներկա և ապագա սերունդների համար:
- **պահպանություն**՝ միջոցների ամբողջություն, որը թույլ է տալիս ներկայացնել հուշարձանը՝ պահպանելով նրա մշակութային արժեքը:
- **խնամք**՝ շարունակական գործողություն, որը պետք է ելնի հուշարձանի նյութից և նրան շրջապատող գոտուց:
- **վերականգնում**՝ հուշարձանի վերադարձն իր հայտնի նախնական վիճակին՝ վերացնելով ավելացումները և հավաքելով նրանից հանված տարրերը՝ առանց որևէ նոր շինանյութի ներմուծման:
- **վերստեղծում**՝ հուշարձանի վերադարձն իր հայտնի նախնական տեսքին՝ նոր շինանյութի ներմուծման ճանապարհով, ինչով և այն տարբերվում է վերականգնումից:
- **օգտագործում**՝ հուշարձանի ներսում կատարվող գործառույթները կամ գործունեության տեսակները: Օգտագործ-

ման այն տեսակը, որի դեպքում առանց նվազագույն սպառնալիքի խստորեն պահպանվում է հուշարձանի մշակութային արժեքը, համարվում է համատեղելի օգտագործում:

- **համատեքստ**՝ հուշարձանը շրջապատող գոտին, որը ներառում է նրա համայնապատկերը և տեսողական ընկալումները:
- **զուգորդում՝** մասնավոր փոխհարաբերություններ, որ գոյություն ունեն մարդկանց և վայրի միջև:
- **նշանակություն**՝ այն ամենի ամբողջությունը, ինչ ցույց է տալիս, մտովի հիշեցնում և արտահայտում հուշարձանը:
- **մեկնաբանություն/ինտերպրետացիա**՝ հանրությանը հուշարձանի մշակութային արժեքի ներկայացման համար օգտագործված միջոցների ամբողջությունը՝ ներառյալ հուշարձանի/վայրի վերլուծությունն ու բացատրությունը, մեկնաբանման համար օգտագործված բոլոր սարքավորումները, ծառայությունները և բոլոր ֆիզիկական տեղադրությունները (ինստալյացիաները), հրատարակությունները (տեղեկատու-ուղեցույցներ, ձայնա-տեսա կրիչներ), մեկնաբանման նպատակով արված հաղորդակցության միջոցները, ինչպես նաև, այն աշխատակազմը, որը կոչված է կատարել այդ խնդիրը:

Քայլ 2
- Ժառանգության վայրի ընտրությունը կատարելուց հետո կարվել այն կազմակերպության պատասխանատուի հետ, ում կողմից իրականացվում է տվյալ վայրի կառավարումը
- Ձեռք բերել վայրում գործնական պարապմունք վարելու մասին պայմանավորվածություն՝ համապատասխան աշխատակցի ուղեկցությամբ

Քայլ 3
- Վայրի պատասխանատուի հետ նախապես որոշել այցելության երթուղին
- Վերջինիցս ձեռք բերել հուշարձանի/վայրի իրավիճակային հատակագիծը՝ վրան նշելով այցի երթուղին

Քայլ 4
- Մինչ այցելությունը դպրոցում կազմակերպել դաս՝ ծանոթացնելով այն հնավայրի/հուշարձանի պատմությանն ու ճարտարապետությանը, ուր այցելելու են
- Աշակերտները, մասնավորապես, պետք է յուրացնեն վայրի հատակագիծը և կարողանան այն կարդալ

Քայլ 5 ➲ Այցելությունից հետո աշակերտներին հանձնարարել գրավոր աշխատանք՝ շարադրելով հուշարձանից/վայրից ստացած իրենց տպավորությունները (գեղատեսիլությունը, ավերակներից ստացած տպավորությունը, պատմությունը, ֆիզիկական վիճակը, առաջարկություններ պահպանության բարելավման վերաբերյալ և այլն)

Քայլ 6 ➲ Դասարանում կազմակերպել ազատ քննարկում և մտքերի փոխանակություն՝ համեմատելով աշակերտների գրավոր աշխատանքները

Գործնական դաս – 1

Այցելություն Էրեբունի քաղաք-ամրոց. ինչպես վերաբերել հնագիտական վայրերին

- Գործնական դասն ընթանում է նախ դասարանում, ապա՝ հնավայրում
- Օգնել աշակերտին՝ ճանաչել հնագիտական ժառանգությունը, այն տարբերել ժառանգության այլ տիպերից, կարողանալ կողմնորոշվել և տեղաշարժվել հնագիտական վայրերում
- Ամրապնդել Ուրարտուի պատմության մասին գիտելիքները (գերադասելի է այցը կազմակերպել այն ժամանակահատվածում, երբ աշակերտները դպրոցական ծրագրի շրջանակում ուսումնասիրում են Ուրարտուի պատմությունը)
- Աշակերտներին բաժանվում է «Էրեբունի» արգելոց-թանգարանի կողմից տրամադրված Էրեբունի քաղաք-ամրոցի ընդհանուր հատակագիծը՝ A4 կամ A3 ֆորմատով, որի վրա նշվում է այցելության երթուղին
- Յուրաքանչյուր աշակերտ պետք է ունենա տետր, գրիչ և գունավոր մատիտ/marker pen՝ դաշտային աշխատանքների ժամանակ անհրաժեշտ նշումների համար
- Այցելության վերջում աշակերտն իրեն տրված հատակագծի վրա պետք է ինքնուրույն գունավորի ամրոցի տարածքի տարբեր շինությունները և նշի դրանց անվանումները
- Այցելության ընթացքում աշակերտը պետք է ծանոթանա այցելուների կողմից հնավայրին պատճառվող վնասների տեսակներին և կարողանա այցելությունից հետո ինքնուրույն ձևակերպել հնագիտական վայրերում այցելուից պահանջվող վարքագծի տարրական կանոնները

Ի՞նչ է հնագիտական ժառանգությունը

Հայաստանի ժառանգությունը տիպային առումով չափազանց բազմազան է. քարայրից մինչև վանք, մենհիրների շարքից մինչև աստղադիտարան, խաչքարից մինչև ժամանակակից քաղաքային հրապարակ: Հնագիտական ժառանգությունն այդ ժառանգությունից ևս անբաժանելի է. ավելին՝ Հայաստանը պոտենցիալ հնագիտական տարածք է: Իսկ ի՞նչ է նշանակում հնագիտական ժառանգություն:

Հնագիտությունը փորձում է վերստեղծել մարդկային պատմությունն իր սկզբնավորումից մինչև մեր օրերը՝ ելնելով գոյություն ունեցող նյութական մնացորդներից: Այն հենվում է մարդկային պատմության տարբեր ժամանակաշրջաններում գետնի տակ գտնվող առարկաների և հետքերի ուսումնասիրության վրա, որոնց մասին գրավոր աղբյուրները համր են կամ ուղղակի բացակայում են: Հնագիտական ժառանգությունն, այսպիսով, անցյալի մասին պատմող հիշողության աղբյուր է, որը թույլ է տալիս վերստեղծել մարդկային պատմությունը՝ վաղագույն ժամանակներից: **Հնագիտական ժառանգության բացահայտման հիմնական միջոցը պեղումն է:** Սակայն, քիչ չեն նաև դեպքերը, երբ այդ ժառանգությունը լույս աշխարհ է գալիս **դիպվածով**՝ շինարարական, գյուղատնտեսական և փորելու-քանդելու հետ առնչվող այլ աշխատանքների ժամանակ:

Ինչպես պատմության ու մշակույթի հուշարձանների, այնպես էլ հնագիտական վայրերի պահպանությունն իրականացվում է օրենքի շրջանակում: Սակայն, հնագիտական ժառանգությունն ունի խոցելիության առավել մեծ աստիճան, քան վերգետնյա պահպանված մշակութային արժեքները: Բավական է նշել այն, որ գյուղական վայրերում տարվող գյուղատնտեսական և հողային աշխատանքները կարող են անդառնալի վնասներ հասցնել այդ ժառանգությանը:

Այցելուների կողմից հնագիտական վայրերին պատճառվող վնասները

Հնագիտական վայրերին այցելուների կողմից կարող են պատճառվել տարբեր վնասներ: Ըստ բնույթի վնասները դասակարգվում են 3 խմբերի՝ **մեխանիկական**, **ֆիզիկա-քիմիական** և **կենսաբանական**: Բացի այդ, հնավայրերին կարող են վնաս պատճառել նաև դիտավորությամբ արված գործողությունները:

Ամեն մի այցելու ժառանգության վայրերում դրսևորում է խիստ անհատական վարքագիծ, որը հնագիտական վայրերում կարող է վնաս

պատճառելու գործոն հանդիսանալ: Այցելուի կողմից հնավայրին պատճառած վնասներն անմիջապես տեսանելի չեն (եթե, իհարկե, դիտավորությամբ չեն արվում), սակայն դրանք առկա են և կուտակվում են ժամանակի ընթացքում: Ընդունված է համարել, որ հնագիտական վայրին սպառնացող վտանգներն ուղիղ համեմատական են այցելուների թվին. որքան մեծ է այցելուների թիվը, այդքան էլ շատ են պատճառված վնասները: Հետևաբար, հնագիտական վայրեր այցելելիս՝ պետք է տեղաշարժվել փոքրիկ խմբերով և ահա թե ինչու.

1 Որպեսզի չառաջանա չկարգավորված իրավիճակ, և ինտենսիվ խմբային քայլը չդառնա մեխանիկական ավերման պատճառ

2 Որպեսզի յուրաքանչյուր անձի մարմնի ջերմությունը, ֆիզիկական ակտիվության աստիճանը, հագուստը և շրջակա միջավայրի կլիմայական պայմանները չդառնան հնավայրի պայմանների ֆիզիկա-քիմիական վատթարացման պատճառ. չէ՞ որ քայլող մարդն արտադրում է ջերմային էներգիա, ջուր և ածխաթթու գազ, ինչը վնասակար և քայքայիչ է հին կառույցների համար

3 Որպեսզի հնավայրը չենթարկվի կենսաբանական աղտոտման. չէ՞ որ յուրաքանչյուր այցելու մթնոլորտ է արտանետում տարբեր մասնիկներ, որոնք հնավայրերի համար կարող են ձևավորել վնասակար կենսաբանական միջավայր

4 Որպեսզի իրավիճակը հնավայրում լինի հեշտ վերահսկելի և բոլոր այցելուների գործողությունները լինեն տեսանելի, միտումնավոր արվող ցանկացած գործողություն (հուշարձանի վրա անունների փորագրում, հնավայրից քարակտորների հավաքում և այլն) կանխվի անմիջապես

Հնագիտական վայրերում վարքագծի կանոնները

- Պահպանել քաղաքակիրթ վարվեցողության կանոնները և հարգալից վերաբերմունք միմյանց նկատմամբ
- Բջջային հեռախոսները բերել անձայն ռեժիմի
- Պահպանել լռություն և չաղմկել էքսկուրսիոն բացատրության ընթացքում

- Պահպանել մաքրություն
- Պլաստիկ, ապակե կամ այլ տեսակի տարրաները գցել բացառապես դրանց համար նախատեսված աղբարկղերում
- Տարածքում տեղաշարժվել միայն ուղեցույց նշաններով

Խստիվ արգելվում է՝

- ծխել, ուտել, հենվել և ձեռքով դիպչել բաց ցուցադրվող մնացորդներին
- հնագիտական վայրեր այցելել ընտանի կենդանիների ուղեկցությամբ
- այցելուների, ինչպես նաև հնավայրի պահպանման անվտանգությունից ելնելով՝ բարձրանալ հնավայրում պահպանված պատերին և զերծ մնալ փակ տարածքներ մտնելուց

Հնագիտական ժառանգություն. հիմնական հասկացությունները

- **հնագիտական ժառանգություն** - մշակութային ժառանգության մաս կազմող, գետնի մակերևույթին, ընդերքում և ջրի տակ գտնվող, անցած դարաշրջանների մարդկային կենսագործունեության արդյունքում ստեղծված նյութական մնացորդներ (անշարժ և շարժական), որոնց պահպանությունը և ուսումնասիրությունը թույլ է տալիս վերստեղծել մարդկության պատմությունը, բնական միջավայրի հետ նրա կապը և որոնց հայտնաբերման և ուսումնասիրության համար պահանջվում է հնագիտական միջամտություն:
- **Հնագիտական տարածք** - հնագիտական օբյեկտ (օբյեկտների համալիր) պարունակող և դրա պահպանության համար անհրաժեշտ տարածք:
- **Հնագիտական հուշարձան** - հնագիտական պեղումներով և հետախուզումներով հայտնաբերված և ուսումնասիրված օբյեկտ:
- **Հնագիտական իր** - պեղումներով կամ դիպվածով, տնտեսական կամ այլ գործունեության հետևանքով հայտնաբերված ու փորձագիտությամբ արժեքավորված ձեռակերտ իր:
- **Մշակութային շերտ** - հողի շերտ, որն առաջացել է մարդկային գործունեության արդյունքում, բաղկացած է և կամ

պարունակում է այդ գործունեության մասին վկայող նյութական մնացորդներ:

- **Հնագիտական պեղումներ և հետախուզում** - հնագիտական ընդերքի, մշակութային շերտերի, հնագիտական օբյեկտների և հուշարձանների՝ դաշտային պայմաններում կատարվող գիտահետազոտական և գիտագործնական համալիր ուսումնասիրություններ (դաշտային հետազոտություններ), որոնք իրականացվում են հողային աշխատանքների կամ տարածքի վերգետնյա տեղազննության և այդ ընթացքում հայտնաբերված նյութական մնացորդների համակողմանի ուսումնասիրության և վավերագրման միջոցով:



Էրեբունի ամրոցը հնագիտական հետազոտությունների առարկա դարձավ 1950 թվականից՝ ճարտարապետ Կոստանդին Հովհաննիսյանի ղեկավարությամբ: Այդ ուսումնասիրություններն ավարտվեցին 1960-ականների վերջին:

Ամրոցի հատակագիծը՝ Կ. Հովհաննիսյանի

Ես ճանաչում եմ Էրեբունին. Ստուգարք այցելությունից հետո

1. Ե՞րբ են ապրել ուրարտացիները

- ☐ մոտ 300 տարի առաջ
- ☐ մոտ 3000 տարի առաջ
- ☐ մոտ 30000 տարի առաջ

2. Ե՞րբ է հիմնադրվել Էրեբունի քաղաք-ամրոցը

- ☐ 205թ.
- ☐ 782թ. Ք. ա.
- ☐ 1926թ.

3. Ո՞վ է հիմնադրել Էրեբունի քաղաք-ամրոցը

- ☐ Մենուա արքա
- ☐ Սարդուրի արքա
- ☐ Արգիշտի արքա

4. Գործառնական ի՞նչ հատվածների է բաժանվում Էրեբունի ամրոցը

- ☐ Արհեստավորական, վարչական և զինվորական
- ☐ Առևտրական, ժամանցային և ուսումնական
- ☐ Պաշտամունքային, պալատական և տնտեսական

5. Ի՞նչ ձև ունի Էրեբունի ամրոցի հատակագիծը

- ☐ Ուղղանկյուն
- ☐ Շրջանաձև
- ☐ Եռանկյունաձև
- ☐ Անկանոն

6. Ո՞րն է Էրեբունի ամրոցի միջնաբերդի ամենամեծ շինությունը

- ☐ Պալատ
- ☐ Սուսի տաճար
- ☐ Խալդի աստծո տաճար (Ապադանա)
- ☐ Զիկկուրատ

7. Նշիր այս առարկաներից յուրաքանչյուրի 1)անվանումը , 2) կիրառությունը և 3) նյութը[3]

1. .....

2. .....

3. .....

3 Լուսանկարները տրամադրել է «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը

1. .....

2. .....

3. .....

1. .....

2. .....

3. .....

Թեմա 3

Գյուղական ժառանգություն. ինչպես ճանաչել և արժևորել

Մենք սիրում ենք մեր գյուղերի բնապատկերը՝ անկրկնելի գեղեցկության և բազմազանության համար: Մեր կյանքի շրջանակից գրեթե անպակաս են այցելությունները գյուղական վայրեր, և ամեն մեկս, եթե անգամ չունենք հայրենի գյուղ, ապա ունենք նախընտրելի գյուղական վայր, որը գրավիչ է իր ավանդական ճարտարապետությամբ, գեղատեսիլ բնությամբ, ոչ նյութական ժառանգության տարրերով և, իհարկե, մարդկանցով: Ժառանգության այդ տեսակին՝ գյուղական ժառանգությանը, մենք դեռևս արժանի գնահատական չենք տվել, որովհետև այն մեզ թվում է խիստ սովորական՝ ի տարբերություն համազգային նշանակության հուշարձանների. Գեղարդի վանքն, անկասկած, չես համեմատի ուշ միջնադարյան գյուղական եկեղեցու հետ, իսկ Սյունիքի մարզի Տաթև գյուղի բնակչի համար Տաթևի վանական համալիրի կողքին դժվար է արժևորել գյուղում 100 տարի առաջ կառուցված որևէ բնակելի տուն: Ժամանակի ընթացքում լքված և անօգտագործելի դարձած գյուղական շինություններն երկրորդ կյանք գրեթե չեն ապրում և դատապարտված են անկման ու կորստյան:

Մինչդեռ գյուղական բնակավայրերի օրինակով կարելի է դատել, թե որքանով է մարդն ունակ և բանական գտնվել՝ իր միջավայրը ձևափոխելիս: Այստեղ մեզ շրջապատող լանդշաֆտի հիմնական տարրերը պայմանավորված են գյուղատնտեսական գործունեության կառուցվածքով: Այսինքն, մեր գյուղական ժառանգությունը ևս կարող է լինել՝

Սոնումենտալ ժառանգություն, որը ներառում է շենքերի և շինությունների համալիրներ և հիմնականում ճանաչելի է հասարակության կողմից:



Թալինի Կաթողիկե եկեղեցին

Տաթևի վանական համալիր, լուսանկարը՝ Սոնա Գրիգորյանի, 14 տարեկան

Քաղաքացիական նշանակության ժառանգություն, որը ներառում է անցյալի առօրյա կյանքի վկայություններ հանդիսացող շենքերի և շինությունների օրինակներ. տեղական նշանակության մատուռներ, բնակելի տներ և համալիրներ, ջրաղացներ, հուշաղբյուրներ, գերեզմանաքարեր և այլն:

Գյուղական ժառանգության կառուցման ձևերը, օգտագործված շինանյութը և ծավալները գրեթե միշտ տեղական պայմանների արտահայտություն են և ձևավորում են հենց տեղական-ավանդական ճարտարապետական ոճ: Դրանց կառուցվածքը ելնում է նաև տեղական կլիմայական պայմաններից և, իհարկե, զբաղմունքից. օրինակ, շինությունների՝ դեպի հարավ կողմնորոշված ճակատներն ունեն ավելի լայն բացվածքներ, մինչդեռ հյուսիսային ճակատները մեծիմասամբ կատարված են խուլ և հաստ պատերով: Գյուղական ավանդական շինությունները, միաժամանակ, գյուղատնտեսական լանդշաֆտի և՛ պատճառն են, և՛ հետևանքը:

Բոլոր գյուղերում կան շինություններ, որոնք անօգտագործելի են դարձել գյուղատնտեսական գործունեության և կյանքի որակի փոփոխության հետևանքով. գոմ, ֆերմա, չորանոց, հուշաղբյուր, ջրաղաց, ջրհոր, հին կամուրջ, եկեղեցի, հին գերեզմանոց, ճարտարապետական կոթողներ, բնակելի տներ, և այդ ամենը կրում է պատմության ու ժամանակի կնիքը, արտահայտում նախորդ սերնդի մշակույթը:

Լինելով հնագույն քրիստոնեական երկիր՝ Հայաստանը հարուստ է **կրոնապաշտամունքային ժառանգության օրինակներով** (վանական համալիր, եկեղեցի, մատուռ, խաչքարեր). գրեթե չկա գյուղ, որ չունենա իր աղոթատեղին կամ «սուրբը»:

Մեր գյուղերը գրավիչ են նաև **ժողովրդական բնակելի ճարտարապետության** օրինակներով. պատմության վաղագույն փուլերի շրջանում որպես բնակարան ծառայած քարայր-կացարաններին փոխարինել են «գլխատուն» կոչվող տները, որոնք գերանածածկ պարզ կացարաններ են: Գյուղական բնակելի տները ցույց են տալիս, թե ինչ ճանապարհով է զարգացել ժողովրդական ճարտարապետությունը Հայաստանում. լեռնային ցուրտ վայրերում իշխել է պարփակ, հաճախ գլխատան շուրջը համախմբված սենյակներով տիպը, իսկ ցածրադիր, մեղմ կլիմայով վայրերում՝ 1-2 հարկանի, դեպի այգին բացվող պատշգամբ ունեցող տիպը: Այդպիսի տներ այսօր էլ հանդիպում են Օշականում, Աշտարակում, Էջմիածնում, Ապարանում, Բջնիում, Մեղրիում, Գորիսում, Խնձորեսկում: 18-րդ դարում Հայաստանում սկսել են կառուցել բազմաբնակարան տներ՝ պատշգամբով, ջրհորով և կոյուղիով: Այդպիսի տներ դեռևս պահպանվել են քաղաքներում՝ Երևանում, Գյումրիում, Էջմիածնում:

Գլխատան ծածկի օրինակ՝ պահպանված Արագածոտնի մարզի Ջրնաղ գյուղում:

ժայռափոր կացարաններ, Սյունիք, Խնձորեսկ



Հազարաշեն ծածկի օրինակներ՝ պահպանված ՀՀ Վայոց ձորի մարզում[4]

4 Լուսանկարները՝ Անդրանիկ Սարգսյանի

Մեր գյուղերից յուրաքանչյուրն ունի իր պատմությունն ու զրույցները, ճաշատեսակներն ու իր եկեղեցու «Ուխտի օրերը», հարսանյաց և տխուր առիթների արարողակարգերը, նախնիներից ժառանգած պարերն ու երգերը, լեզվական բարբառները, որոնք ևս ամբողջացնում են գյուղի պատմությունը:

Ինչպե՞ս օգնել աշակերտին կարևորել այս ամենը,

Գյուղական ժառանգության ո՞ր տարրերից սկսել աշխատանքը

1. Անշարժ ժառանգություն. Շենքեր և շինություններ

1. 1. Մոնումենտալ ժառանգություն (տաճարներ, եկեղեցիներ, վարչական, ուսումնական շենքեր, մեմորիալ հուշարձաններ և այլն)

1.2. Գյուղի/բնակավայրի հասարակական կյանքի կազմակերպմանը նպաստող շինություններ (աղբյուր, շատրվան, ջրհոր, բնակելի տուն)

1.3. Արտադրական կառույցներ կամ, այսպես կոչված, «փոքր» ժառանգություն (գոմ, հնձան, ձիթհան, ջրաղաց, մառան, չորանոց, ֆերմա, թոնրատուն և այլն)

2. Շարժական ժառանգություն. Իրեր և առարկաներ

2. 1. Առօրյա կյանքին վերաբերող իրեր և առարկաներ, հագուստներ, տոների հետ առնչվող պարագաներ

2.2. Գործիքներ՝ կապված ավանդական զբաղմունքների հետ

2.3. Կահ-կարասի, ծիսական առարկաներ

3. Ոչ նյութական ժառանգություն

3. 1. Հեքիաթներ, զրույցներ, երգեր, պարեր

3.2. Տոներ

3.3. Խոհարարական բաղադրատոմսեր

Մեր գյուղերին բնորոշ է ժառանգության տիպային բազմազանությունը



Գյուղական ժառանգության ճանաչողությունը սովորեցնում և օգնում է

- հասկանալ անցյալն ու ներկան
- աշխատել մեր զգայարաններով. տեսողություն, հոտառություն, լսողություն, շոշափելիք
- մարզել մտավոր կարողությունները, զարգացնել երևակայությունը, շունչ ու մարմին տալ պատմությանը
- ներդնել ակտիվ մանկավարժություն. **կարդալ**, **պատմել** և **գրել**

Կարդալ - տեքստ, գծագիր, լուսանկար, աղյուսակ, տեղանք և այլն

Պատմել - այն ինչ տեսնում ես, այն ինչ զգում ես, հարցեր տալ, լսել, քննարկել, բանավիճել և այլն

Գրել - նշումներ այցելությունների վերաբերյալ, վահանակների և լուսանկարների բացատրագրերի, երևակայական տեքստերի կազմում, հարցաթերթիկներ, երգեր և այլն

Գյուղական ժառանգության ճանաչողությունը հատկապես օգնում է...

- կողմնորոշվել ժամանակի և տարածության մեջ, օրինակ՝ հաշվել դարերը
- նպաստում է աշակերտի՝ ապագա քաղաքացու, վարքագծի ձևավորմանը, ժառանգության ճանաչողության միջոցով սովորեցնում է հարգել մարդու աշխատանքն ու տաղանդը
- նպաստում է տարածքային ինքնության ձևավորմանը՝ տեղական ժառանգության օգտագործման միջոցով
- հնարավորություն է ստեղծում սեփական ժառանգությունը համեմատել այլոց ժառանգությունների հետ, դաստիարակում է առավել բաց և մեծահոգի գիտակցություն դեպի ժառանգությունը:

Գործնական դաս - 1

Բացահայտենք հարազատ վայրերն ինքներս

- Գործնական դասն ընթանում է նախ դասարանում, ապա՝ գյուղի տարածքում
- Առաջին հերթին ներկայացվում է Հայաստանի Հանրապետության քարտեզը, աշակերտները սովորում են Հայաստանի վարչատարածքային բաժանումը, գտնում իրենց մարզը և գյուղը, փորձում են նկարագրել այն աշխարհագրական միջավայրը, ուր գտնվում է հայրենի գյուղը (օրինակ՝ Չքնաղ գյուղը գտնվում է Ծաղկունյաց լեռնաշղթայի արևմտյան լանջին, Քասախ գետի հովտում, ծովի մակերևույթից 1945մ բարձրության վրա, զբաղեցնում է 8902քառ. կմ տարածք, բնակչության թիվը՝ 250 և այլն), աշակերտները փորձում են ինքնուրույն պատմել, թե ինչ գիտեն իրենց գյուղի մասին[5]:
- Ուսուցիչն աշակերտներին ծանոթացնում է իրենց համայնքի վարչական սահմաններում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակին[6]:
- Ուսուցիչն ամփոփում է առաջին զրույցը և կարևորում է 3 թեմաներ, որոնց շուրջն աշակերտներին առաջարկվում է աշխատել՝ բաժանվելով 3 խմբի (յուրաքանչյուրում՝ առավելագույնը 10 հոգի):
- Գյուղի տարածքում դաշտային աշխատանքն ամփոփվում է 3 շաբաթից՝ աշակերտական յուրաքանչյուր խմբի զեկույցով:
- Գործնական դասը պետք է օգնի աշակերտին ճանաչել հայրենի գյուղի ժառանգությունը, գյուղում առկա ժառանգության օրինակների տիպերը, ամբողջական պատկերացում կազմել գյուղի պատմության մասին:

5 *ՀՀ-ում գտնվող յուրաքանչյուր համայնքի մասին կարելի է կարդալ ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական կայքում՝ http://www.mta.gov.am*

6 *Յուրաքանչյուր համայնքի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանները գրանցված են մարզի հուշարձանների պետական ցուցակում, որին կարելի է ծանոթանալ www.arlis.am կայքում:*

Գործնական դասի համար առաջարկվող թեմաները

1. **Գյուղի բնակելի տները նախկինում և այսօր.** տների հիմնական շինանյութը, մուտքերը, դարպասները, տանիքների ձևերը, հարդարանքը, հարկայնությունը, ճակատներին արված զարդանախշերը՝ կենդանական, բուսական, երկրաչափական և այլն (1-ին խումբ)
2. **Գյուղի կարևոր շինությունները.** եկեղեցի, դպրոց, գյուղապետարան, գրադարան, մշակույթի տուն և այլն (2-րդ խումբ)
3. **Շինություններ, որոնք պատմում են գյուղի պատմությունը.** ջրաղաց, ջրհոր, աղբյուր, զոհվածների հուշարձան, կոթողներ, մահարձաններ և այլն (3-րդ խումբ)

Հ/Հ	1-ին շաբաթ	2-րդ շաբաթ	3-րդ շաբաթ
1-ին խումբ	**Նախապատրաստական աշխատանքներ** Գյուղի բնակելի տների հին լուսանկարների ձեռքբերում գյուղացիներից, հին լուսանկարների դասակարգում ըստ ժամանակագրության, գյուղի կառուցապատման ժամանակագրական փուլերի որոշում (շատ առաջ, մեր պապերի ժամանակ, մեր ծնողների ժամանակ), դեռևս պահպանված հին տների մի քանի օրինակների ընտրություն, զույցներ գյուղի տարեց մարդկանց հետ և զույցի կարևոր կետերի գրառում	**«Անցյալի հետքերը»** Ընտրված հին տների նկարագրություն ■ Շինանյութը (տուֆ, աղյուս, բազալտ, տեղական քար) ■ Հարկայնությունը (գետնափոր, կիսագետնափոր, միահարկ, երկհարկ և այլն) ■ Տան կազմը (սենյակները, խոհանոցը, տնտեսական մասը, գլխավոր ճակատի կողմնորոշումը (հյուսիս,հարավ...), սենյակների դասավորությունը (միակողմ, երկկողմ, խառը) ■ Տանիքի ձևը (հարթ, երկթեք, քառաթեք) ■ Գլխավոր ճակատի և ճակատների հարդարանքը (կենդանական, բուսական կամ երկրաչափական զարդանախշեր, սրբատաշ կամ կոպտատաշ քարով շարվածք, սվաղ) ■ Մուտքի/մուտքերի բացվածքները (ձևը, որ ճակատից է)	**«Գյուղի զարգացումը»** Նոր տների նկարագրություն և համադրություն հնի հետ ■ Ի՞նչ են պատմում տեղաբնակները ■ Ուսումնասիրությունների արդյունքները. գյուղի ամենահին տունը/տները, գյուղի հին տների հետ առնչվող ամենահետաքրքիր պատմությունը (պատմությունները, ինչպե՞ս պահպանել և օգտագործել գյուղի հին տներից որևէ մեկը) ■ Եզրահանգումներ

Հ/Հ	1-ին շաբաթ	2-րդ շաբաթ	3-րդ շաբաթ
2-րդ խումբ	**Նախապատրաստական աշխատանքներ** Գյուղի գլխավոր շենքերի՝ եկեղեցու, դպրոցի, մշակույթի տան, ջրաղացի հին և նոր լուսանկարների ձեռքբերում գյուղի բնակիչներից, զրույցներ գյուղի տարեց մարդկանց հետ և զրույցի կարևոր կետերի գրառում. ինչպիսի՞ն է եղել եկեղեցու թաղը նախկինում, ի՞նչ փոփոխություններ է կրել միջավայրը ժամանակի ընթացքում, որտե՞ղ կարելի է կարդալ գյուղի մասին և այլն	**«Անցյալի հետքերը»** Հավաքած նյութերի հիման վրա պատմական տեղեկանքի կազմում գյուղի եկեղեցու, դպրոցի, մշակույթի տան և ընտրված մյուս շենքերի վերաբերյալ, դրանց նկարագրության կազմում ■ Կառուցման տարեթիվը կամ ժամանակաշրջանը ■ Կառույցի պատվիրատուն ■ Ի՞նչ փոփոխությունների է ենթարկվել ժամանակի ընթացքում, որպես ինչ է օգտագործվել ■ Շինանյութը (տուֆ, աղյուս, բազալտ, տեղական քար) ■ հատակագծի ձևը (ուղղանկյուն, քառակուսի, կլոր), հատակագծային չափերը (երկարությունը, լայնությունը), գլխավոր ճակատի կողմնորոշումը ■ տանիքի ձևը (հարթ, երկթեք, քառաթեք, վեղարաձև) ■ Գլխավոր ճակատի և ճակատների հարդարանքը (կենդանական, բուսական կամ երկրաչափական զարդանախշեր, սրբատաշ կամ կոպտատաշ քարով շարվածք, սվաղ) ■ Մուտքի/մուտքերի բացվածքները (ձևը, որ ճակատից է)	**«Գյուղի զարգացումը»** Ներկա իրավիճակի նկարագրություն և համադրություն հնի հետ ■ Ի՞նչ են պատմում տեղաբնակները և հավաքված նյութերը ■ Ուսումնասիրությունների արդյունքները. ի՞նչ օգտակար գործառույթ ունեն այսօր այդ շենքերը ■ Եզրահանգումներ

Հ/Հ	1-ին շաբաթ	2-րդ շաբաթ	3-րդ շաբաթ
3-րդ խումբ	**Նախապատրաստական աշխատանքներ** Գյուղի ճարտարապետական փոքր ձևերի՝ զոհվածների հուշարձան, աղբյուր-հուշաղբյուր, կոթող, խաչքար ցուցակագրում, դրանց վերաբերյալ տվյալների հավաքագրում գրավոր աղբյուրներից Նյութերի հավաքում գյուղի տարեց բնակիչներից, քանի՞ մարդ է մասնակցել Երկրորդ աշխարհամարտին և քանի՞ զոհ է տվել գյուղը, քանի՞սն են մասնակցել Արցախյան պատերազմին, կա՞ն արդյոք զոհվածներ և այլն	**«Անցյալի հետքերը»** Հավաքած նյութերի հիման վրա պատմական և նկարագրական տեղեկանքի կազմում յուրաքանչյուր հուշարձանի համար ■ Կառուցման տարեթիվը կամ ժամանակաշրջանը ■ Կառույցի պատվիրատուն ■ Ի՞նչ պատմական իրադարձության հետ է կապվում տվյալ հուշարձանի կառուցումը ■ Շինանյութը (տուֆ, աղյուս, բազալտ, տեղական քար) ■ Հորինվածքը, հարդարանքը (կենդանական, բուսական կամ երկրաչափական զարդանախշեր, սրբատաշ կամ կոպտատաշ քարով շարվածք, սվաղ)	**«Գյուղի զարգացումը»** Ներկա իրավիճակի նկարագրություն և համադրություն հնի հետ ■ Ի՞նչ է եղել նախկինում տվյալ հուշարձանի տեղում. ի՞նչ են պատմում տարեց գյուղացիները ■ Ի՞նչ նշանակություն ունեն այսօր այդ շինությունները ■ Ինչպե՞ս հարգանքի տուրք մատուցել զոհված համագյուղացիների հիշատակին (այցելություններ հարազատներին, հարգանքի տողան հուշարձանի մոտ, միջոցառում դպրոցում կամ գյուղի մշակույթի տանը) ■ Եզրահանգումներ

Իմ ամենամոտ ժառանգությունը՝ ՀՀ Արագածոտնի մարզի Չքնաղ գյուղի օրինակով

1878թ. կառուցված, 1926թ. երկրաշարժից մեծապես տուժած և 1979թ. գյուղացիների ուժերով վերանորոգված, արտաքուստ և ներքուստ ուղղանկյուն հատակագծով գյուղական եկեղեցին մինչև 2000թ. ուներ այս տեսքն ու անհրապույր միջավայրը:

Կարևորելով կրոնական ժառանգության դերը՝ որպես փոխադարձ հաղորդակցության և մարդկային շփումների ամրանի, ծնունդով չքնաղցի Գառնիկ Հովսեփյանն ու իր որդիները նախաձեռնեցին մի նախագիծ, որի նպատակը խորհրդային տարիներին պահեստի վերածված, ապա անուշադրության մատնված և չգործող եկեղեցու վերակենդանացումն էր: Աշխատանքների վերահսկողությունն իրականացվել է ՀՀ մշակույթի նախարարության Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության կողմից:

Ու երբ ձեռնարկվեցին տարածքի մաքրման աշխատանքներն ու կարիք եղավ հնագիտական պրոֆիլակտիկ գործողությունների, բացվեցին եկեղեցու նախաստեղծ կառույցից պահպանված պատերի հատվածներ:

Ձեռնարկված հնագիտական պեղումներն ակնհայտ դարձրեցին, որ 19-րդ դարի եկեղեցու տեղում շատ ավելի վաղ գոյություն է ունեցել մեկ այլ եկեղեցի, որն ունեցել է ուղղանկյուն հատակագիծ, պայտաձև խորան և արտաքին սյունասրահ:

Հայտնաբերված մնացորդները, պատերի պահպանված հատվածները, պայտաձև խորանը, արտաքին սյունասրահը վերականգնող ճարտա-

բապետներին թույլ տվեցին ճշգրտել Սբ Ստեփանոսի թվագրությունը և տիպը:

Այս նախագծի շնորհիվ հայտնաբերվեց, ամենայն հավանականությամբ, 5-րդ դարով թվագրվող միանավ բազիլիկ եկեղեցին՝ արտաքին սյունասրահով:

Եկեղեցու թաղի/վայրի նախնական նշանակությունը և ոգին պահպանելու նպատակով, միաժամանակ, 5-րդ դարի եկեղեցու հիմքերի հարևանությամբ կառուցվել է նոր եկեղեցի, որն իրականացրել են վերականգնող-ճարտարապետներ Հովհաննես Սանամյանն ու Գրիգոր Նալբանդյանը՝ հարազատ մնալով միջնադարյան խաչաձև գմբեթավոր հայկական եկեղեցիների ճարտարապետական ձևերին, ոճին ու հարդարանքի պարզությանը:

Միաժամանակ, պատվիրատուի՝ Գառնիկ Հովսեփյանի կողմից միջոցներ են ներդրվել դեպի հուշարձան տանող մոտեցման ուղիները կազմակերպելու համար, ինչը բարելավել է շրջակա միջավայրը: Շինարարական բոլոր աշխատանքների իրականացմանը մասնակցել են գյուղացիները:

Չքնաղում կյանքի կոչված նախագիծը, իրապես, հանդիսանում է գյուղական միջավայրում ճարտարապետական ժառանգության պահպանության և վերստին արժևորման օրինակելի իրականացում:

Այսօր գյուղի կենտրոնն ունի այլ տեսք՝ բարետես, խնամված և հաճելի բոլորի համար:



Չքնաղի Սբ Ստեփանոս նորակառույց եկեղեցին և 5-րդ դարի բազիլիկը



Նախագծի շրջանակում վերականգնվել և ասիճանական անկումից փրկվել է նաև գյուղի կենտրոնից մոտ 100 մ հեռու գտնվող Սբ Նարեկ մատուռը:

Չքնաղի եկեղեցու վերականգնման օրինակն, անխոս, չքնաղցի աշակերտի գիտակցության մեջ ամրապնդում է ժառանգության արժեքը և ուսանելի օրինակ է, թե ինչպես կարելի է ապրեցնել գյուղական լքված ժառանգությունը, նպաստել բնակավայրի պատմական հիշողության պահպանմանն ու գյուղի պատմության ամբողջացմանը:

Սա ուսանելի օրինակ է նաև այն մասին, որ չպետք է անտեսել գյուղի՝ աստիճանական անկման ենթարկված տեղական ժառանգությունը. պետք է դրսևորել կամք և գտնել այն ապրեցնելու ու ապագա սերունդներին փոխանցելու հնարավորություն:

Չքնաղի նախագիծն, իհարկե, ունի տեղական նշանակություն և տեղական ժառանգության պահպանության ու հանրահռչակման հաջողված օրինակ է:

Այն մեծապես նպաստել է համայնքի ներգրավմանը ժառանգության պահպանության գործին և այն գիտակցության ձևավորմանը, որ ժառանգության պահպանության որակը և միջավայրի գեղեցկությունը ևս կենսամակարդակի ցուցանիշներ են:

Նախագծի հաջող իրականացումը Չքնաղ գյուղի հետ է կապել հարևան համայնքներին, ուր չկան գործող եկեղեցիներ, և բնակիչներն ամեն կիրակի շտապում են Չքնաղ՝ մասնակցելու կիրակնօրյա ժամերգությանը:

Եկեղեցու հոգևոր հովիվ տեր Մուշե քահանա Վահանյանը շրջակա գյուղերի՝ երգեցողության աչքի ընկնող տվյալներ ունեցող աշակերտուհիներից ձևավորել է հոգևոր երգչախումբ, որին ունկնդրում են ոչ միայն Սբ Ստեփանոս այցելող հավատացյալները, այլ համայնքի բնակիչներն ու հյուրերը:



Սբ Ստեփանոս եկեղեցուց հյուսիս կառուցված է վանահոր տունը, որին իր հարկի տակ է պատսպարում նաև եկեղեցական համալիրի սեղանատունը: Վերջինս աչքի է ընկնում իր զուսպ ու համեստ կառարմամբ՝ ներդաշնակեցված համալիրին:

Ցինաղի մշակույթի տունը ևս գյուղի կարևոր շենքերից է, գյուղի երիտասարդների հանգստի և ժամանցի կազմակերպման գլխավոր օջախը: Այստեղ ևս կարելի է կազմակերպել բաց դասեր՝ նվիրված ժառանգության ճանաչմանն ու պահպանությանը:



Աղբյուր - հուշարձան՝ նվիրված Երկրորդ աշխարհամարտում զոհված համագյուղացիներին:

Գառնիկ Հովսեփյանը և Սբ Ստեփանոս եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Մուշե Վահանյանը:

Ջինաղի դպրոցի հին շենքը

Ջինաղի դպրոցի նոր շենքի վերակառուցման աշխատանքներն արդեն ընթացքում են

European Union Prize for Cultural Heritage / Europa Nostra Awards 2012

Special Mention of the Jury

CATEGORY 3: Dedicated Service

PROJECT: Garnik Hovsepyan
Erévan, ARMENIA

LOCATION: Lisbon, Portugal / 1 June 2012

Culture

Alexander Fürst zu Sayn-Wittgenstein-Sayn
Chairman of the Heritage Awards Jury - Category 3

Հայրենի գյուղի մշակութային ժառանգության պահպանությանն ու բարելավմանն ուղղված երկարամյա ջանքերի համար 2012թ. Գառնիկ Հովսեփյանն արժանացել է «Եվրոպական միության-Եվրոպա նոստրա» մրցանակաբաշխության ժյուրիի պատվոգրի՝ «Անհատի կողմից օրինակելի ներդրում ժառանգության պահպանության գործում» անվանակարգում:

Ես արդեն գիտեմ, թե ինչ ասել է...

Հնագիտական պեղում

Հուշարձանի տարածքում դաշտային պայմաններում կատարվող գործնական միջամտություն, որն իրականացվում է հողային աշխատանքների միջոցով:

Եկեղեցի

Ճարտարապետական շինություն է, որը նվիրված է քրիստոնեական կրոնի որևէ պաշտամունքի:Այն հունարեն բառ է, որը նշանակում է՝ շինություն ժողովների համար:

Մատուռ

Փոքրաչափ քրիստոնեական պաշտամունքային կառույց, որը հունարենից թարգմանաբար նշանակում է վկայարան և կառուցվում է ի հիշատակ որևէ նահատակի կամ նրա գերեզմանի վրա: Միջնադարյան Հայաստանում մատուռների մեծ մասը Թուխ Մանուկ է կոչվել:

Աբսիդ / Խորան

Եկեղեցու ներքին տարածության բաղկացուցիչ մաս, որն ընդգրկում է կառույցի արևելյան մասը: Հայկական եկեղեցիներում աբսիդն ավանդաբար կիսաշրջանաձև է, սակայն կարող են հանդիպել բազմանկյուն աբսիդներով եկեղեցիներ:

Սյունասրահ

Սյուներով զարդարված սրահ, որը կարող է լինել կառույցի ներսում կամ կցված լինել դրսից:

Գմբեթ

Ճարտարապետական կառույցների կիսագնդաձև ծածկի տեսակ, որը դրված է թմբուկի վրա դեպի դուրս բարձրացող պատերին: Հայկական պաշտամունքային ճարտարապետությանը բնորոշ են գմբեթավոր եկեղեցիները:

Գավիթ / ժամատուն

Եկեղեցական շինությունների բաղկացուցիչ մաս, որը սովորաբար կցված է լինում եկեղեցուն արևմտյան կողմից: Գավիթների մեծ մասը հա-

ճախ եղել է իշխանական տների տապանատուն և ներսում կատարվել են թաղումներ: Գավիթներն օգտագործվել են նաև որպես ժողովատեղեր:

Սեղանատուն

Վանական համալիրների բաղկացուցիչ մաս, շինություն, որը նախատեսված է եղել վանականների՝ միասին ճաշելու համար:

Խաչքար

Հայկական միջնադարյան կոթողային հուշարձանի տեսակ, որն իրենից ներկայացնում է ուղղահայաց դիրքով կանգնեցված քարե սալ, որի կենտրոնում մեծ խաչն է՝ շուրջը հիմնականում զարդանախշ:

Գլխատուն

Անցյալում հանդիպող բնակելի կացարանի տեսակ Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջաններում, որոնք ունեցել են ուշագրավ ծածկ՝ կազմված գերաններից՝ հենված 1 կամ 2 զույգ սյուների վրա: Ծածկի կենտրոնում արված բացվածքը՝ երդիկը, լուսավորել և օդափոխել է բնակարանը, իսկ երդիկի տակ եղել է օջախը կամ թոնիրը:

Աղբյուր-հուշարձան

Պատմական որևէ իրադարձությանը նվիրված աղբյուրը ձևավորող ճարտարապետական կառույց: Աղբյուր-հուշարձանները հիմնականում ունեն մեմորիալ նշանակություն:

Հուշարձանների պետական ցուցակ

Հուշարձանների վկայագրերի հիման վրա կազմված ցուցակ, որի կառուցվածքը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանմանը[7]: ՀՀ Կառավարությունը պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակները հաստատում է մարզ առ մարզ: Հաստատված ցուցակները ենթակա են փոփոխության և արդիականացման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նարեկ

Գրիգոր Նարեկացու 1001-1002թթ. գրված «Մատյան ողբերգության» երկի ժողովրդական անվանումը: Միջնադարում այս ստեղծագործությա-

7 Տես «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ, ԱՄՐԱԿԱՅՄԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N 438-Ն որոշումը :

նը վերագրել են բուժիչ զորություն և անվանել Նարեկ՝ հավանաբար հեղինակի կամ Նարեկավանքի անունով (պատմական Ռշտունյաց գավառ, գյուղ Նարեկ):

Եվրոպական միություն

Ժողովրդավար և ինքնիշխան եվրոպական երկրների միություն, որի ստեղծման համաձայնագիրն ընդունվել է 1951թ.: Ներկայումս Եվրոպական միությանն անդամակցում են 27 եվրոպական երկրներ (Գերմանիա, Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Կիպրոս, Դանիա, Իսպանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Հունաստան, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նիդեռլանդներ, Լեհաստան, Պորտուգալիա, Չեխիա, Ռումինիա, Միացյալ թագավորություն, Սլովակիա, Սլովենիա, Շվեդիա): ԵՄ նպատակը իրենց քաղաքացիների կյանքի բարելավումն է և ավելի լավ երկիր կառուցելը:

Եվրոպա Նոստրա

Ավելի քան 50 երկրներ ներկայացնող միջազգային կազմակերպություն, որի նպատակը Եվրոպայի մշակութային ժառանգության պահպանությունն ու խրախուսումն է: Ստեղծվել է 1963 թվականին: Եվրոպա Նոստրան Եվրոպական միության հետ անցկացնում է ամենամյա մրցանակաբաշխություն մշակութային ժառանգության բնագավառում, որի նպատակը հաջողված փորձի փոխանակումն է:

Թեմա 4

Համաշխարհային ժառանգություն. իմ երկիրը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցուցակում

Թեմայի շրջանակում պետք է կարողանալ տալ հիմնական գիտելիքներ համաշխարհային ժառանգության վերաբերյալ՝ ներառյալ նախնական հասկացությունները և սահմանումները, համաշխարհային ժառանգության 3 անվանակարգերը (մշակութային, բնության և խառը), ինչպես նաև, ոչ նյութական համաշխարհային ժառանգությունը: Այս համատեքստում պետք է ներկայացնել նաև Հայաստանի Հանրապետությունը և հայկական ժառանգությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցուցակում: Անդրադարձը համաշխարհային ժառանգության պահպանության միջազգային գործիքներին և կազմակերպություններին նույնպես տեղին կլինի և թույլ կտա ըմբռնել, որ ժառանգության պահպանությունը միջազգային մտահոգություն է:

Ինչպես ստեղծվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ն. պատմությունը՝ համառոտ

Դեռևս 1942-ին, Երկրորդ աշխարհամարտի թեժ օրերին, եվրոպական պետությունների կառավարությունները, որոնք դեմ դուրս եկան նացիստական Գերմանիային և նրա դաշնակիցներին, Անգլիայում հրավիրեցին կրթության նախարարների կոնֆերանս: Թեև պատերազմի ավարտը դեռևս հեռու էր, այնուհանդերձ, նախարարների քննարկման առարկան կրթական համակարգերի վերակառուցումն էր՝ խաղաղության վերահաստատման դեպքում: Այս նախագիծն արագորեն ընդլայնվեց ու արժանացավ համընդհանուր համակրանքի: Նախագծին միացավ նաև Ամերիկայի Միացյալ Նահանգները:

Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո, 1945թ. նոյեմբերի 16-ին, հրավիրվեց Միացյալ Ազգերի կոնֆերանս Լոնդոնում՝ կրթական և մշակութային կազմակերպություն հիմնելու նպատակով: Կոնֆերանսին մասնակից 40 պետություններ, որ առանձնապես էին տուժել պատերազմի արհավիրքներից, Ֆրանսիայի և Անգլիայի ակտիվ ազդակների ներքո որոշեցին հիմնել մի կազմակերպություն՝ նպատակաուղղված իսկական խաղաղության կայացմանը: Հիմնադիրների պատկե-

ռացմամբ՝ այդ նոր կազմակերպությունը պետք է հաստատեր «մարդկության բարոյական և մտավոր համախմբվածություն» և, այսպիսով, խոչընդոտեր նոր պատերազմի սանձազերծմանը:

Կոնֆերանսի ավարտին 37 պետություններ ստորագրեցին Հիմնադիր փաստաթուղթ, որով ծնունդ առավ Միացյալ Ազգերի Կազմակերպության Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն: Հենց 1946-ին այն վավերացվեց շուրջ 20 պետությունների կողմից (Հարավային Աֆրիկա, Սաուդյան Արաբիա, Ավստրալիա, Բրազիլիա, Կանադա, Չինաստան, Դանիա, Եգիպտոս, ԱՄՆ, Ֆրանսիա, Հունաստան, Հնդկաստան, Լիբանան, Մեքսիկա, Նորվեգիա, Նոր Զելանդիա, Դոմինիկյան Հանրապետություն, Անգլիա, Չեխոսլովակիա և Թուրքիա): 1951-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ին անդամագրվեցին Ճապոնիան և Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը, 1953-ին՝ Իսպանիան, 1954-ին՝ ԽՍՀՄ-ը: 1960-ին կազմակերպության անդամներ դարձան աֆրիկյան 19 պետություններ: 1991-1993թթ. ՅՈՒՆԵՍԿՕ-ին անդամագրվեցին ԽՍՀՄ նախկին հանրապետությունները: Հայաստանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ է 1992թ. հունիսի 9-ից:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանը գտնվում է Փարիզում: Ներկայումս կազմակերպությանն անդամագրվել են 195 պետություններ:

Ստեղծումից ի վեր ՅՈՒՆԵՍԿՕ-ն իրականացնում է գործողություններ՝ ուղղված մշակույթի և մշակութային ժառանգության պաշտպանությանը: Մասնավորապես, կազմակերպության շրջանակում ստեղծված միջազգային համաձայնագրերն ու հանձնարարականներն այն անգնահատելի ռեսուրսներն են, որոնք թույլ են տալիս ապահովել մշակույթի և մշակութային ժառանգության միջազգային պաշտպանություն:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի մասին մանրամասն կարելի է տեղեկանալ՝ այցելելով կազմակերպության պաշտոնական վեբ-կայք՝ www.unesco.org

Մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված ՅՈՒՆԵՍԿՕ-ի հեղինակած հինգ կարևոր միջազգային կոնվենցիաները և դրանց տարբերանշանները

Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին կոնվենցիան, Հաագա, 1954թ.

Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու միջոցառումների մասին կոնվենցիան,1970թ., Փարիզ

Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պահպանության մասին կոնվենցիան, 1972թ., Փարիզ

Համաշխարհային ոչ նյութական ժառանգության պահպանության մասին կոնվենցիան, 2003թ., Փարիզ



Մշակութային արտահայտումների բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին կոնվենցիան, 2005թ., Փարիզ

Ինչպե՞ս ծնվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պահպանության մասին կոնվենցիան

Բոլոր ժամանակներում պատերազմները և, հատկապես, զինված ընդհարումներն ու առճակատումներն ուղեկցվել են մշակութային ժառանգության ամբողջականությանը պատճառած լրջագույն ավերումներով: Ժառանգությանը պատճառված վնասներն ավելի են մեծացել ռմբակոծությունների և հեռահար զենքերի կիրառումից հետո: Ժառանգությանը հասցված վնասներն ու կորուստն առավել ուժգնացան Երկրորդ աշխարհամարտի ժամանակ, երբ այդ պատերազմի գազանություններն ուղեկցվեցին նաև մշակութային արժեքների աննախադեպ թալանով և ավերումներով: Ահա թե ինչու, Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ՅՈՒՆԵՍԿՕ-ն կարևորեց ու ձեռնարկեց Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին կոնվենցիան (Հաագա, 1954թ.), որի տրամաբանական լրացումը հանդիսացավ, այնուհետև, 1970թ. Փարիզում ընդունված «Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու միջոցառումների մասին կոնվենցիան». կարևորագույն միջազգային փաստաթուղթ՝ ուղղված մշակութային արժեքների ապօրինի առևտրի դեմ:

Հետպատերազմյան կյանքը ցույց տվեց, որ ժառանգության համար սպառնալիքներն առկա են նաև խաղաղ ժամանակներում: Այսպես, օրինակ, 1959թ. Նեղոսի աջ ափին գտնվող եգիպտական Ասուան քաղաքի մոտ ԽՍՀՄ օգնությամբ բարձրադիր ամբարտակի ջրաէներգետիկական համալիրի կառուցումը սպառնում էր ջրածածկ անել հին եգիպտական քաղաքակրթության գլուխգործոցներ համարվող Աբու Սիմբել տաճարների հովիտը, ինչի դեմ ՅՈՒՆԵՍԿՕ-ում բողոք ներկայացրեցին հենց Եգիպտոսի ու Սուդանի կառավարությունները: Այս դեպքն առաջացրեց միջազգային մտահոգություն և նոր միջազգային նախաձեռնության առիթ հանդիսացավ:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությամբ մեկնարկեց հեղեղման վտանգի տակ գտնվող տարածքների հնագիտական ուսումնասիրության լայնածավալ արշավ, որը միավորեց կազմակերպությանն անդամակցող երկրների ջանքերը և ցուցադրեց միասնական պատասխանատվությունը՝ հանուն այդ ժառանգության փրկության: Աբու Սիմբել և Ֆիլե տաճարներն ապամոնտաժվեցին, տեղափոխվեցին և նույնությամբ վերականգնվեցին այլ՝ առավել ապահով վայրում: Այս նախաձեռնության օրինակով ՅՈՒՆԵՍԿՕ-ի սատարմամբ նմանօրինակ ծրագրեր իրականացվեցին Իտալիայում (Վենետիկի և քաղաքի ջրային ավազանի պահպանությունը), Պակիստանում (Մոհենջո-Դարո հնավայրի պահպանությունը), Ինդոնեզիայում (Բորոբուդուր բլուր-տաճարի պահպանությունը) և միջազգային հանրության կողմից համարվեցին միանգամայն հաջողված:

Հանուն ժառանգության՝ համագործակցության և միասնության կարևորությունը նոր մտահղացման հիմք հանդիսացավ՝ ստեղծել նոր, առավել արդյունավետ միջազգային գործիք, որը մեկ փաստաթղթում կմիավորի մշակութային և բնության ժառանգությունների պաշտպանությունը և կսկզբնավորի ժառանգության «համաշխարհային» նշանակության մասին գաղափարը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանձնարարականով այդ փաստաթղթի նախապատրաստումը հանձնարարվեց Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդին՝ ԻԿՕՄՕՍ-ին:

1972թ. նոյեմբերի 16-ին ընդունվելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի 17-րդ Գլխավոր կոնֆերանսի կողմից՝ «Մշակութային և բնության հանաշխարհային ժառանգության պահպանության մասին կոնվենցիան» ժառանգության պահպանության բնագավառում սկզբնավորեց նոր փուլ՝ ժառանգությունը դիտարկելով որպես ընդհանուր արժեք, որի պահպանության պատասխանատվությունը կիսվում է բոլորի միջև: Կոնվենցիան, որն առավելապես հայտնի է «Համաշխարհային ժառանգության կոնվենցիա» անունով, շրջանառության մեջ դրեց «համաշխարհային ժառանգություն» կատեգորիան՝ հավակնելով դառնալ մշակութային բազմազանությունների խրախուսման, միջազգային համագործակցության և փոխըմբռնման, ինչպես նաև, ազգերի միջև խաղաղության հաստատման գործիք:

Համաշխարհային մշակութային և բնության ժառանգության պահպանության մասին կոնվենցիա, 1972թ. նոյեմբերի 16, Փարիզ.

ինչ պետք է գիտենալ...

1 Ճանաչի՛ր Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի տարբերանշանը.

Այն ներկայացված է կլոր շրջանի մեջ ներառված կենտրոնական քառակուսու տեսքով:

2 Մեկնաբանի՛ր Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի տարբերանշանը. այն խորհրդանշում է աշխարհի մշակութային և բնության բազմազանության փոխադարձ կապը.

Կենտրոնական քառակուսին խորհրդանշում է մարդկային արարչագործությունն ու ոգեշնչանքը: Մինչդեռ շրջանագիծը բնության պարգևների խորհրդանիշն է: Տարբերանշանը կլոր է, ինչպես աշխարհը և խորհրդանշում է համայն մարդկության ժառանգության համընդհանուր պահպանությունը:

3 Հիշի՛ r, nr Համաշխարհային ժառանգության կոնվենցիան սահմանում է՝ ինչ ասել է «մշակութային ժառանգություն»:

... Հուշարձանները, համալիրները, տեսարժան վայրերը, որոնք պատմության, արվեստի կամ գիտության տեսանկյունից ունեն բացառիկ համընդգրկուն արժեք

Գառնիի հեթանոսական տաճարը, ՀՀ Կոտայքի մարզ

Նորավանք, Բուրթելաշեն եկեղեցին, ՀՀ Վայոց ձորի մարզ

Վանական համալիր Հավուց թառ, ՀՀ Կոտայքի մարզ
Թարգմանչաց եկեղեցին, ՀՀ Արմավիրի մարզ

4. Հիշի՛ r, nr Համաշխարհային ժառանգության կոնվենցիան սահմանում է նաև՝ ինչ ասել է «բնության ժառանգություն»:

... Ֆիզիկական և կենսաբանական կազմավորումներից բաղկացած բնության հուշարձանները, երկրաբանական և ֆիզիոգրաֆիական կազմավորումները, բնության տեսարժան վայրերը, որոնք գեղագիտության, գիտության կամ կոնսերվացման տեսանկյունից ունեն բացառիկ համընդգրկուն արժեք...

մանրամասն տե՛ս Կոնվենցիայի Հոդված 2-ում

Քարե քանդակ «Պեռլիտե փիղ», ՀՀ Կոտայքի մարզ, Ջարենցավան քաղաքի մոտ

Կապուտան (Գոգի) լիճ, ՀՀ Սյունիքի մարզ, Քաջարան քաղաքի մոտ

Բնական թունել, ՀՀ Սյունիքի մարզ, Քարահունջ գյուղի մոտ

Քարաբենի բնապատմական համալիր, ՀՀ Սյունիքի մարզ, գ. Քարաբեն

5. ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ քանի՞ պետություններ են արդեն միացել Կոնվենցիային և դարձել Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կողմ-պետություններ:

Կողմ-պետություններ են համարվում այն երկրները, որոնք միացել են կոնվենցիային և վավերացրել են այն: 2012թ. սեպտեմբերի 19-ի դրությամբ Համաշխարհային ժառանգության կոնվենցիան վավերացրել են 190 երկրներ: Հայաստանի Հանրապետությունը Կոնվենցիայի կողմ-պետություն է 1993թ. սեպտեմբերի 5-

ից: Ըստ աշխարհագրական ծածկույթի՝ կողմ-պետությունները խմբավորված են տարածաշրջաններով:

6 Իսկ ի՞նչ է հաջորդում վավերացմանը ...

Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին դրույթի համաձայն՝ կողմ-պետությունները պարտավորվում են հայտնաբերել և հաշվառել իրենց տարածքներում գտնվող մշակութային և բնության այն արժեքները, որոնք կարող են համարվել «բացառիկ համընդհանուր» արժեքներ ու գրանցվել Համաշխարհային ժառանգության ցուցակում՝ իրենց արժանի տեղը զբաղեցնելով համաշխարհային մշակութային գանձարանում:

7 Համաշխարհային ժառանգության ցուցա՞կ

Այո: Սա այն ցուցակն է, որի համալրումը նախատեսում է Կոնվենցիան՝ հիմք ընդունելով կողմ-պետությունների ներկայացրած առաջարկությունները: Ցուցակը, սակայն, չի ստեղծվում մեխանիկորեն: Յուրաքանչյուր հայտ-առաջարկ անցնում է գրանցման համար սահմանված ընթացակարգով և Ցուցակում վերջնական գրանցում է ստանում Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից մշակված չափորոշիչներին համապատասխանության ստուգումից հետո:

Համաշխարհային ժառանգության ցուցակ. ինչի՞ց սկսել...

Առաջին հերթին, պետք է գիտենալ, որ

- Մշակութային և բնության ժառանգությունների աստիճանական անկումը կամ ավերումը, անկախ գործողության վայրից, աղքատացնում է աշխարհի բոլոր ժողովուրդներին:
- Ամեն մի ժողովուրդ յուրօրինակ է իր մշակույթով և պատմության ընթացքում ստեղծել է արժեքներ, որոնք կարող են համարվել եզակի ու բացառիկ: Ուստի, Համաշխարհային ժառանգության կոնվենցիան իր անդամ-պետություններին կոչ է անում հանդես գալ առաջարկություններով և ստեղծել մի ցուցակ, որը կխարսխվի հենց բացառիկության և եզակիության վրա:

- Այսպիսով, Կոնվենցիան մշակութային և բնության ժառանգության բնագավառ ներմուծեց «**բացառիկ համընդգրկուն արժեք**» կարգավիճակը և մեկնարկեց **ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցուցակի համալրումը**: Այդ Ցուցակում հայտնվելը դարձավ կողմ-պետությունների արտաքին, մշակութային և բնապահպանական քաղաքականության մաս:
- Մինչ Համաշխարհային ժառանգության ցուցակում հիմնական գրանցում ստանալը՝ կողմ-պետությունները կազմում են, այսպես կոչված, «նախնական ցուցակներ» և սահմանված ձևաչափով ու կարգով ներկայացնում ՅՈՒՆԵՍԿՕ: Նախնական ցուցակները ենթակա են վերանայման և լրացման՝ ցանկացած պահի: 2014թ. հունվարի 1-ի դրությամբ ընդհանուր թվով 1569 մշակույթի ու բնության հուշարձաններ ընդգրկված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության նախնական ցուցակներում և սահմանված ընթացակարգեր անցնելուց հետո կարող են գրանցվել հիմնական՝ Համաշխարհային ժառանգության ցուցակում:
- Համաշխարհային ժառանգության հիմնական ցուցակում առաջին հուշարձանները գրանցվել են 1978 թվականից: Այդ ցուցակում 2014թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված են 981 արժեքներ, որից՝
    - 759 մշակութային
    - 193 բնության
    - 29 խառը (մշակութային + բնության)
- Համաշխարհային ժառանգության ցուցակում գրանցված հուշարձանների թվով առաջին տասնյակում են.
    - Իտալիա, 49 հուշարձան
    - Չինաստան, 45 հուշարձան
    - Իսպանիա, 44 հուշարձան
    - Ֆրանսիա, 38 հուշարձան
    - Գերմանիա, 38 հուշարձան
    - Մեքսիկա, 32 հուշարձան
    - Հնդկաստան, 30 հուշարձան
    - Միացյալ թագավորություն, 28 հուշարձան
    - Ռուսաստան, 25 հուշարձան
    - ԱՄՆ, 21 հուշարձան

- Թեև Համաշխարհային ժառանգության կոնվենցիային անդամակցում են 190 կողմ-պետություններ, սակայն Ցուցակում դեռևս ներկայացված են դրանցից 160-ը:
- Համաշխարհային ժառանգության կոնվենցիային անդամակցող 30 պետություններ՝ հիմնականում աֆրիկյան և ասիական տարածաշրջաններից, դեռևս չունեն Համաշխարհային ժառանգության ցուցակում գրանցված մշակութային և բնության ժառանգության «բացառիկ համընդգրկուն արժեքներ»: Եվրոպական երկրներից միայն Մոնակոն է, որ դեռևս ներկայացված չէ Ցուցակում:
- Ըստ աշխարհագրական ծածկույթի՝ Ցուցակը ներկայացնում է հետևյալ տարածաշրջանները.
    - Աֆրիկա
    - Արաբական երկրներ
    - Ասիա և խաղաղօվկիանոսյան երկրներ
    - Եվրոպա և Հյուսիսային Ամերիկա
    - Լատինական Ամերիկա և Կարաիբյան ավազանի երկրներ
- Հայաստանի Հանրապետությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ում աշխատում է «Եվրոպա և Հյուսիսային Ամերիկա» խմբում, որի կազմում ընդգրկված են 51 երկրներ:
- Մեր հարևան երկրները ևս հանդիսանում են Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կողմ-պետություններ և ներկայացված են Համաշխարհային ժառանգության ցուցակում.
    - Վրաստան՝ 3 մշակութային հուշարձան
    - Ադրբեջան՝ 2 մշակութային հուշարձան
    - Իրան՝ 16 մշակութային հուշարձան
    - Թուրքիա՝ 9 մշակութային և 2 խառը հուշարձան
- Որպես «համաշխարհային ժառանգություն» գրանցված հուշարձանների և վայրերի անխաթար պահպանությունն ապահովելու և այդ ժառանգությանը սպառնացող վտանգները կանխարգելելու նպատակով՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն վարում է նաև Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցուցակ, որում ներկայումս գրանցված են 30 երկրների 38 հուշարձաններ: Վտանգված հուշարձանների ցուցակում են նաև Մցխեթ պատմական քաղաքը և Բագրատի տաճարն ու Գելաթի վանքը՝ Վրաստանից:

- Համաշխարհային ժառանգության ցուցակում գրանցման չափորոշիչներ մշակելու և համաշխարհային ժառանգության հետ առնչվող գործունեությունները համակարգելու նպատակով ՅՈՒՆԵՍԿՕ-ի կառուցվածքում 1992թ. հիմնադրվել է «Համաշխարհային ժառանգության կենտրոն» հիմնարկը, որի կողմից էլ մշակվել են գրանցման համար նախատեսված 10 չափորոշիչները:
- 10 չափորոշիչներից առաջին 6-ը վերաբերում են մշակութային, վերջին 4-ը՝ բնության ժառանգությունների արժեքավորմանը: Չափորոշիչներն ընդունված է համարակալել հռոմեական թվանշաններով՝ i, ii, iii, iv, v և այլն:
- Ցուցակում գրանցվելու համար առաջարկվող արժեքը պետք է համապատասխանի առնվազն մեկ կամ մի քանի չափորոշիչների:
- Համաշխարհային ժառանգության կենտրոնը նաև մշակել և հրատարակել է Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կատարման ուղեցույցը, որը մատչելի է www.whc.unesco.org պաշտոնական կայքում:



Բագրատի տաճարը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Վտանգված համաշխարհային ժառանգության ցուցակում է [8]

8 Լուսանկարները՝ ԻԿՕՄՕՍ/Վրաստանի

«Համաշխարհային ժառանգություն» կարգավիճակ ստանալու համար հուշարձանը պետք է համապատասխանի 10 չափորոշիչներից առնվազն մեկին կամ մի քանիսին.

i. հանդիսանա մարդկային ստեղծագործության գլուխգործոց

ii. հանդիսանա պատմական որևէ ժամանակաշրջանում կամ մշակութային արեալում նշանակալից փոխազդեցությունների վկայություն՝ ճարտարապետության, տեխնոլոգիայի, մոնումենտալ արվեստի, քաղաքների կամ ճարտարապետական լանդշաֆտների հատակագծման տեսանկյունից

iii. հանդիսանա եզակի կամ բացառիկ վկայություն՝ ապրող կամ անհետացած որևէ մշակութային ավանդույթի վերաբերյալ

iv. հանդիսանա ճարտարապետական կամ տեխնոլոգիական որևէ համալիրի կամ լանդշաֆտի շինարարական արվեստի աչքի ընկնող օրինակ՝ մարդկային պատմության որևէ ժամանակաշրջանում (ժամանակաշրջաններում)

v. հանդիսանա ավանդական բնակավայրերի, ցամաքային կամ ծովային տարածքների ավանդական օգտագործման աչքի ընկնող օրինակ, որը բնորոշում է այս կամ այն մշակույթը, մարդու և շրջակա միջավայրի փոխներգործությունը, հատկապես, երբ վերջինս դառնում է խոցելի՝ անդառնալի մուտացիաների հետևանքով

vi. հանդիսանա բացառիկ համընդգրկուն արժեք ունեցող որևէ պատմական իրադարձության կամ ապրող ավանդույթի, գաղափարների, հավատալիքների, գրական-գեղարվեստական ստեղծագործությունների հետ ուղղակիորեն կամ նյութապես զուգադրվող մշակույթ

vii. հանդիսանում է բացառիկ գեղագիտական նշանակության կամ բնական գեղեցկությամբ աչքի ընկնող բնության երևույթ

viii. հանդիսանում է երկրագնդի պատմության մեծ փուլերի աչքի ընկնող օրինակ՝ ներառյալ կյանքի, առանձնակի կարևոր նշանակության երկրաբանական կազմավորումների կամ գեոմորֆոլոգիական տարրերի վկայությունները

ix. հանդիսանում է էկոլոգիական կամ կենսաբանական պրոցեսների աչքի ընկնող օրինակ՝ էկոհամակարգերի, բուսական և կենդանական աշխարհի (ցամաքային, ջրային, ծովային, ափամերձ) էվոլյուցիոն ընթացքի վերաբերյալ

x. հանդիսանում է առավել աչքի ընկնող բնական կացարան (կացարաններ), որի (որոնց) պահպանությունը կարևորվում է կենսաբազմազանության տեսանկյունից:

Հայաստանի Հանրապետությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցուցակում

Հաղբատի և Սանահինի վանական համալիրներ,
գրանցման տարեթիվը՝ 1996թ., 2000թ.
Գրանցման չափորոշիչները՝ ii, iv



Էջմիածնի Մայր տաճարը, եկեղեցիները և Զվարթնոց
հնագիտական վայրը, գրանցման տարեթիվը՝ 2000թ.
Գրանցման չափորոշիչները՝ ii, iii

Գեղարդի վանական համալիրը և
Ազատ գետի հովիտը , գրանցման տարեթիվը՝ 2000թ.
Գրանցման չափորոշիչները՝ ii

WORLD HERITAGE
2013-2014
NATIONAL GEOGRAPHIC
http://whc.unesco.org/en/wallmap/
ARCTIC
CANADA
NORTH AMERICA
UNITED STATES OF AMERICA
MEXICO
PACIFIC OCEAN
ATLANTIC OCEAN
SOUTH AMERICA
BRAZIL
PERU
BOLIVIA
PARAGUAY
CHILE
URUGUAY
ARGENTINA
VENEZUELA
COLOMBIA
ECUADOR
GREENLAND
MAURITANIA
ANTARCTIC CIRCLE
ARCTIC CIRCLE
TROPIC OF CANCER
TROPIC OF CAPRICORN
EQUATOR
urplace
The World Heritage emblem symbolizes the interdependence of the world's natural and cultural diversity. The central square represents the achievements of human skill and inspiration, and the circle celebrates the gifts of nature. The emblem is round, like the world, a symbol of global protection for the heritage of all humankind.
The Earthen Architecture Conservation Programme works toward conserving and revitalising earthen architecture, which is threatened by natural disasters and industrialization. Currently, some one hundred properties on the World Heritage List are partially or totally built with earth.
World Heritage sites are inscribed on the List on the basis of their merits as forming a significant contribution to the cultural and natural heritage of the world. Their outstanding universal value is considered to go beyond national boundaries and to be of importance for future generations.
Conserving the diversity of life on Earth is critical to global human welfare. With the support of the World Heritage Convention, the most important biodiversity sites receive international recognition as well as technical and financial assistance to deal with threats such as agricultural encroachment, alien species and poaching.
The World Heritage Cities Programme seeks to protect living historic city centres and their cultural and architectural heritage from threats such as uncontrolled development or inappropriate construction.
Cultural heritage refers to monuments, buildings and sites with historical, aesthetic, archaeological, scientific, ethnological or anthropological value. Natural heritage refers to outstanding physical, biological or geological features and includes habitats of threatened species, as well as areas with scientific, environmental or aesthetic value. Mixed sites have both cultural and natural values.
Worldwide, 107 World Heritage forests protect more than 80 million hectares of woodland. This accounts for 2 percent of the global forest cover and about 13 percent of the surface area of all protected forests on the planet.
The World Heritage Marine Programme helps countries nominate marine sites and manage them effectively to ensure that they will thrive for future generations. There are currently 46 marine sites on the World Heritage List.
Convention concerning the Protection of the World Cultural and Natural Heritage, adopted by the United Nations Educational, Scientific and Cultural Organization, at its General Conference, Paris, 16 November 1972.
EXTRACTS
... parts of the cultural or natural heritage are of outstanding interest and therefore need to be preserved as part of the world heritage of humankind as a whole.
... [with] the magnitude and gravity of the new dangers threatening ... [the world's heritage], it is incumbent on the international community as a whole to participate in the protection of the cultural and natural heritage of outstanding universal value. ...
An Intergovernmental Committee for the Protection of the Cultural and Natural Heritage of Outstanding Universal Value, called "the World Heritage Committee", is ... established within UNESCO.
... the Committee shall establish ... under the title of "World Heritage List", a list of the properties forming part of the cultural heritage and natural heritage ... which it considers as having outstanding universal value...

From the vast plains of the Serengeti to historic cities such as Vienna, Lima and Kyoto; from the prehistoric rock art on the Iberian Peninsula to the Statue of Liberty; from the Kasbah of Algiers to the Imperial Palace in Beijing - all of these places, as varied as they are, have one thing in common. All are World Heritage sites of outstanding cultural or natural value to humanity and are worthy of protection for future generations to know and enjoy.

Key

- Cultural property
- Natural property
- Mixed property (cultural and natural)
- Transnational property
- Property currently inscribed on the List of World Heritage in Danger

See country index on back side of map for site listings.

Number indicates site order by year of inscription within each country.

Letters are assigned to transnational properties in the order of their inscription on the List.

Only States Parties to the World Heritage Convention are labeled on this map.

United Nations (UN) country boundaries shown as of October 2013

http://whc.unesco.org
http://www.nationalgeographic.com

© 2013 UNESCO Printed October 2013

The designations employed and the presentation of material on this map do not imply the expression of any opinion whatsoever on the part of UNESCO and National Geographic Society concerning the legal status of any country, territory, city or area or of its authorities, or concerning the delimitation of its frontiers or boundaries.

Dotted line represents approximately the Line of Control in Jammu and Kashmir agreed upon by India and Pakistan. The final status of Jammu and Kashmir has not yet been agreed upon by the parties.

Final boundary between the Republic of Sudan and the Republic of South Sudan has not yet been determined.

**Occupied Palestinian territory*

The Small Islands Programme focuses on preserving heritage on the islands of the Caribbean Sea and the Atlantic, Pacific and Indian Oceans.

The World Heritage Sustainable Tourism Programme helps visitors discover World Heritage sites while encouraging respect of the environment and local culture and enhancing community livelihoods.

Robinson Projection
SCALE 1:43,720,000

The reduced scale of the maps and the cartographic projection have resulted in approximate location of some properties.

Land cover data:
Tom Patterson, US National Park Service

Text: Shelley Sperry

Design and production by National Geographic Maps

Built to the 19th century in the Carpathian Mountains of Ukraine, communities built unique wooden churches. These three-part structures with shingled roofs, cupolas and bell towers expressed spiritual life in a form seen nowhere else in the world.



The Bahrain of Argion's rocky landscape hugs the Atlantic coast of Mauritania, providing a winter haven for two million migratory wading birds. Gazelles and foxes roam the sand dunes, while mammals, reptiles and dry islands offer safe nesting sites and rich feeding grounds for 16 bird species and endangered green sea turtles.



Like a string of pearls, seven groups of religious and historical monuments stretch across Nepal's Kathmandu valley, showing to the world's great multiethnic and religious diversity. Famed Hindu temples at Changu Narayan date from the 5th century. At Boudhanath's gilded Buddhist stupa, "all-seeing eyes" watch over 50 Tibetan Buddhist monasteries.

A favorite subject of artists for ten centuries, the snow-capped volcanic cone of Japan's Fujiyan rises 3,776 meters above glittering blue lakes. Shinto shrines and winding Buddhist paths draw 200,000 pilgrims a year to the sacred mountain, many hiking at night in order to watch the sun rise at the summit.

Monitor lizards, bats and 43 species of birds live on the protected southern third of Rennell Island, the world's largest raised coral atoll. Part of the Solomon Islands, the site is invaluable as a laboratory for studying biodiversity and climate change.

Համաշխարհային ժառանգություն.
Գործնական դաս - 1

Վարժություններ Համաշխարհային ժառանգության ցուցակի օգնությամբ

Այս գործնական վարժանքների նպատակն է աշակերտներին ծանոթացնել ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնի պաշտոնական կայքին և սովորեցնել՝ ինչպես օգտվել դրանից: Ուստի անհրաժեշտ է, որ աշակերտներն ապահովված լինեն համակարգիչներով և ինտերնետ կապով: Քանի որ www.whc.unesco.org կայքը հասանելի է անգլերենով և ֆրանսերենով, ցանկալի է, որ այս գործնական աշխատանքում ներգրավվեն նաև դպրոցների օտար լեզուների ուսուցիչները:

- Դասը նպատակահարմար է անցկացնել ավագ դպրոցների աշակերտների հետ՝ հաշվի առնելով միջին դպրոցական տարիքի աշակերտների համար տեղեկատվության և տերմինների բարդությունը, որքան էլ փորձ արվի դրանք պարզեցնել:
- Կայքի կառուցվածքին ծանոթանալուց և դրանից օգտվելու հմտությունները յուրացնելուց հետո աշակերտներին բաժանվում է ստորև ներկայացվող աղյուսակների դատարկ սյունակները. աշակերտը պետք է լրացնի և ուսուցչին հանձնի դասի ավարտին:
- Առաջարկվող աղյուսակ 1-ը լրացնելուց հետո դասարանը կարող է բաժանվել խմբերի (յուրաքանչյուրում՝ 2-3 հոգի), ընտրել աղյուսակում ներկայացված որևէ օբյեկտ և պատրաստել գրավոր աշխատանք տվյալ հուշարձանի (հուշարձանախմբի) մասին: Գրավոր ռեֆերատը պետք է ներկայացնի հուշարձանի (հուշարձանախմբի) պատմությունը, և աշակերտները պետք է կարողանան բացատրել, թե ինչու է այն համարվում համաշխարհային ժառանգություն:
- Աղյուսակ 2-ի նպատակն է ամրապնդել աշակերտների գիտելիքները՝ Համաշխարհային ժառանգության մշակութային և բնության ժառանգությունների չափորոշիչների վերաբերյալ: Այն պետք է հանձնարարել որպես տնային աշխատանք և կատարման ժամկետ սահմանել 1 շաբաթը: Դասարանը պետք է բաժանել 5 խմբի (յուրաքանչյուրում՝ 3-4 հոգի)՝ ամեն մի խմբի հանձնարարելով այս կամ այն չափորոշիչով գրանցված համաշխարհային ժառան-

գության մեկ օրինակ: Խումբն ինքնուրույն պետք է կարողանա ծանոթանալ նյութին և պատրաստել փոքրիկ զեկույց՝ դասարանում ներկայացնելու համար: Այս դասը կարելի է անցկացնել մրցույթի ձևով. հաղթող կդառնա այն խումբը, որն առավել հետաքրքիր կներկայացնի նյութը: Աշակերտներին պետք է քաջալերել այս շրջանակում պատրաստել նաև սլայդ-տեսաշար՝ օգտագործելով Համաշխարհային ժառանգության ցուցակին կցված լուսանկարները:

- Աղյուսակ 3-ի նպատակն է աշակերտներին ներկայացնել մեր հարևանների տեղը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության գանձարանում: Ուստի, թեմայի ուսումնասիրությունը նախատեսվում է 4 շաբաթների համար՝ յուրաքանչյուր շաբաթ անդրադառնալով Հայաստանի Հանրապետությանը սահմանակից 4 երկրներից (Ադրբեջան, Վրաստան, Իրան, Թուրքիա) մեկի ժառանգությանը՝ Համաշխարհային ժառանգության ցուցակում: Աշակերտները պետք է կարողանան հաղորդել այդ երկրների մասին համառոտ պատմա-աշխարհագրական տեղեկություններ: 4-շաբաթյա տևողությամբ թեմատիկ դասի առանցքում պետք է դրվի «Հարգանքը այլոց ժառանգությունների նկատմամբ» կարգախոսը՝ համեմատականներ տանելով Ջուղայի պատմական գերեզմանատան ավերման (Նախիջևան, Ադրբեջան), Իրանում հայկական եկեղեցիների պահպանության, Վանա լճի Աղթամարի Սուրբ Խաչ և Անիի Տիգրան Հոնենց եկեղեցիների վերականգնման (Թուրքիա) դեպքերի միջև:

Համաշխարհային ժառանգություն.

Աղյուսակ 1

Համաշխարհային ժառանգության օբյեկտի անվանումը	Կողմ-պետությունը	Տեսակը (մշակութային, բնության, խառը) և չափորոշիչները	Գրանցման տարեթիվը
Սիդնեյի օպերան			
Հաղբատի և Սանահինի վանական համալիրներ			
Չինական մեծ պարիսպը			
Ազատության արձանը Նյու-Յորքում			
Կրեմլը և Կարմիր հրապարակը			
Սենայի ափերը Փարիզում			
Աթենքի ակրոպոլիսը			
Թաջ Մահալ			

Համաշխարհային ժառանգություն.

Աղյուսակ 2

Չափորոշիչները	Խումբ 1	Խումբ 2	Խումբ 3	Խումբ 4	Խումբ 5	Խումբ 6
i չափորոշիչ	Աբու Սիմբել տաճարները, Եգիպտոս					
ii չափորոշիչ				Իրանի հայկական եկեղեցիները, Իրան		
iii չափորոշիչ		Հին Դամասկոս, Սիրիա (Վտանգված ժառանգություն)				
iv չափորոշիչ			Աքոս լեռը, Հունաստան			
v չափորոշիչ						Կահիրե պատմական քաղաքը, Եգիպտոս
vi չափորոշիչ	Մոսարի կամուրջը, Բոսնիա Հերցեգովինա				Հերոսիմայի խաղաղության հուշահամալիրը, Ճապոնիա	
vii չափորոշիչ		Բայկալ լիճը, Ռուսաստանի Դաշնություն			Կիլիմանջարոյի ազգային պարկը, Տանզանիա	
viii չափորոշիչ						Շվեյցարական Ալպեր, Շվեյցարիա
ix չափորոշիչ				Մաչու Պիկչու, Պերու		
x չափորոշիչ			«Օկապի» կենդանիների արգելավայրը, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն (Վտանգված ժառանգություն)			

Համաշխարհային ժառանգություն.

Աղյուսակ 3

Մեր հարևանները	1-ին շաբաթ	2-րդ շաբաթ	3-րդ շաբաթ	4-րդ շաբաթ
Ադրբեջան	X			
Վրաստան		X		
Իրան			X	
Թուրքիա				X

Հարգել պատմությունը, հարգել մշակույթը. հայկական պատմամշակութային ժառանգությունը Իրանի Իսլամական Հանրապետությունում



Սբ Ստեփանոս Նախավկա եկեղեցու վերանորոգումը 2008 թվականին

© Վարուժան Առաքելյան

Հարգել պատմությունը, հարգել մշակույթը

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցուցակում հայկական ժառանգությունը ներկայացված է նաև Լվովի պատմական կենտրոնում (Ուկրաինա): Հայկական համալիրը գրանցված է որպես Համաշխարհային ժառանգություն 1998թ.-ից և ընդգրկում է.[9]

- Հայկական եկեղեցի, 1363թ.
- Զանգակատուն, 1527թ.
- Սուրբ Քրիստափորի սյունը, 1726թ.
- Հայ արքեպիսկոպոսների պալատը, 17-18դդ.
- Հայ բենեդիկտյանների կանանց մենաստանը, 1690թ.





9 Լուսանկարները՝ http://ru.wikipedia.org/

Համաշխարհային ժառանգության հնագիտական վայրերը. ժամանակավոր ցուցահանդեսի կազմակերպում դպրոցում

Ի նշանավորումն ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պահպանության կոնվենցիայի 40-րդ տարեդարձի՝ 2012թ. ապրիլի 18-ին, Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրը, Երևանի քաղաքապետարանի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը՝ «ԻԿՕՄՈՍ/Հայաստան» կազմակերպության հետ գործընկերությամբ, հանրությանը ներկայացրեց «Համաշխարհային ժառանգության հնագիտական վայրերը» մեծադիր պաստառների ժամանակավոր ցուցահանդեսը:[10] Այն իրականացվել էր այնպիսի նեցուկների վրա, որոնք հեշտորեն շրջիկ ցուցահանդեսի հնարավորություն են ընձեռում:

«Էրեբունի» արգելոց-թանգարանը, ուր ի պահ են տրված ցուցահանդեսի նյութերը, պատրաստակամ է ցուցահանդեսը ժամանակավորապես (նվազագույնը՝ 2 շաբաթ ժամկետով) տրամադրել այն դպրոցներին, որոնք ցանկություն կդրսևորեն հյուրընկալել այն:

Մանրամասների համար դիմել՝

0020, ք. Երևան, Էրեբունի փող. 38, Էրեբունի թանգարան,
Հասարակայնության հետ կապերի և հանրահռչակման բաժին,
հեռ.՝ 43-89-53, e-mail: erebunimuseum@gmail.com

Ցուցահանդես «Համաշխարհային ժառանգության հնագիտական վայրերը». ի՞նչ կարելի է տեսնել

10 Ցուցահանդեսում օգտագործված բոլոր լուսանկարները տրամադրել են ԻԿՕՄՈՍ-ի ազգային կոմիտեները:




Կոգուրյո, Չինաստան
Koguryo, China

Այս ազդագիրը կարող է գրավել Ձեր դպրոցի բոլոր աշակերտների ուշադրությունը:

Հենց դպրոցում է հնարավոր կազմակերպել հանդիպում Համաշխարհային ժառանգության հնագիտական վայրերի հետ...



Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կատարումն ապահովող միջազգային կազմակերպությունների պատասխանատվությունները՝ համառոտ

ICCROM

International Council on Monuments and Sites

Conseil International des Monuments et des Sites

UICN

Կազմակերպության անվանումը և հասցեն	Գործառույթները	Պատասխանատվությունները Կոնվենցիայի շրջանակում
ԻԿԿՌՕՄ **ICCROM** Via di S. Michele, 13 I-00153 Rome Italy Tel: + 39 06 585 531 Fax: + 39 06 5855 3349 E-mail: iccrom@iccrom.org http://www.iccrom.org	**ԻԿԿՌՕՄ** (Մշակութային արժեքների ուսումնասիրման, պահպանության և վերականգնման միջազգային կենտրոն) Միջկառավարական կազմակերպություն, որի կենտրոնակայանը Հռոմում է (Իտալիա): Հիմնադրվել է 1956թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից և իր կանոնադրության համաձայն գործունեություն է իրականացնում մշակութային անշարժ և շարժական ժառանգությունների ոլորտներում՝ ուսումնասիրություն, հաշվառում և վավերագրում, տեխնիկական աջակցություն, մասնագիտական դասընթացներ և ժառանգության հանրահռչակմանն ուղղված ծրագրեր: ԻԿԿՌՕՄ-ին անդամակցում են աշխարհի 132 երկրների կառավարություններ: Հայաստանի Հանրապետությունը կազմակերպության անդամ է 2004 թվականից:	**Դերը Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի շրջանակում.** ▶ Առաջնահերթ գործընկեր համաշխարհային ժառանգության կրթական և ուսուցողական ծրագրերում ▶ Համաշխարհային ժառանգության օբյեկտների պահպանության վիճակի մոնիտորինգի իրականացում ▶ Կողմ-պետությունների կողմից ներկայացված միջազգային օգնության դիմումների քննություն ▶ Աջակցություն կարողությունների ամրապնդմանն ուղղված գործողություններում:[10]

10 *Այս և հաջորդ երեք աղյուսակները՝ Managing Cultural World Heritage published in November 2103 by UNESCO*

International Council on Monuments and Sites

Conseil International des Monuments et des Sites

Կազմակերպության անվանումը և հասցեն	Գործառույթները	Պատասխանատվությունները Կոնվենցիայի շրջանակում
ԻԿՕՄՕՍ **ICOMOS** 49-51, rue de la Fռdռration 75015 Paris France Tel: + 33 (0)1 45 67 67 70 Fax: + 33 (0)1 45 66 06 22 E-mail: secretariat@icomos.org http://www.icomos.org	**ԻԿՕՄՕՍ** (Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհուրդ) Ոչ-կառավարական միջազգային կազմակերպություն, որի կենտրոնակայանը Փարիզում է (Ֆրանսիա): Հիմնադրվել է 1965թ., Վարշավայում: Իր կանոնադրության համաձայն՝ գործունեություն է իրականացնում ճարտարապետական և հնագիտական ժառանգության ուսումնասիրման, պահպանության և վերականգնման բնագավառում՝ խրախուսելով պահպանության տեսության, մեթոդաբանության և գիտական մոտեցումների շուրջ երկխոսությունը և հաջողված փորձի փոխանակումը: ԻԿՕՄՕՍ-ի գործունեությունը խարսխվում է Վենետիկի խարտիայի սկզբունքների վրա, որն ընդունվել է 1964թ. և հանդիսանում է հուշարձանների պահպանության և վերականգնման բնագավառում հիմնարար փաստաթուղթ: ԻԿՕՄՕՍ-ն ունի ազգային կոմիտեներ աշխարհի 115 երկրներում: ԻԿՕՄՕՍ-ի հայաստանյան ազգային կոմիտեն՝ ԻԿՕՄՕՍ/Հայաստանը, ստեղծվել է 2002թ.:	**Դերը Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի շրջանակում.** ▶ Համաշխարհային ժառանգության ցուցակում գրանցման համար ներկայացված կողմ-պետությունների դիմումների մասնագիտական փորձաքննություն և գնահատում (մշակութային հուշարձանների համար) ▶ Համաշխարհային ժառանգության օբյեկտների պահպանության վիճակի մոնիտորինգի իրականացում ▶ Կողմ-պետությունների կողմից ներկայացված միջազգային օգնության դիմումների քննություն ▶ Աջակցություն կարողությունների ամրապնդմանն ուղղված գործողություններում:

Կազմակերպության անվանումը և հասցեն	Գործառույթները	Պատասխանատվությունները Կոնվենցիայի շրջանակում
ԲՊՄՄ **IUCN** Rue Mauverney 28 CH-1196 Gland Switzerland Tel: +41 (22) 999 0000 Fax: +41 (22) 999 0002 E-mail: worldheritage@iucn.org http://www.iucn.org	**ԲՊՄՄ** (Բնության պահպանության միջազգային միություն) Ոչ-կառավարական միջազգային կազմակերպություն, որի կենտրոնակայանը Գլանդում է (Շվեյցարիա): Հիմնադրվել է 1948թ.: Հիմնական գործառույթը կառավարություններ, հասարակական կազմակերպություններ և գիտական հանրության միջև հավասարակշռված համագործակցության, գործընկերության և միջազգային ընկերակցության հաստատումն է՝ հանուն բնության ամբողջականության և բազմազանության անխաթար պահպանության՝ երաշխավորելով բնական ռեսուրսների օգտագործման կենսունակությունը՝ բնապահպանական տեսանկյունից: ԲՊՄՄ-ին անդամակցում են աշխարհի 140 երկրների 200 կառավարություններ և կառավարական կազմակերպություններ, 800 ոչ-կառավարական կազմակերպություններ: Հայաստանի Հանրապետությունը կազմակերպության անդամ է 2004 թվականից:	**Դերը Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի շրջանակում.** ▶ Համաշխարհային ժառանգության ցուցակում գրանցման համար ներկայացված կողմ-պետությունների դիմումների մասնագիտական փորձաքննություն և գնահատում (բնության հուշարձանների համար) ▶ Համաշխարհային ժառանգության օբյեկտների պահպանության վիճակի մոնիտորինգի իրականացում ▶ Կողմ-պետությունների կողմից ներկայացված միջազգային օգնության դիմումների քննություն ▶ Աջակցություն կարողությունների ամրապնդմանն ուղղված գործողություններում:

Կազմակերպության անվանումը և հասցեն	Գործառույթները	Պատասխանատվությունները Կոնվենցիայի շրջանակում
ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն **UNESCO World Heritage Centre** 7, place de Fontenoy 75352 Paris 07 SP France Tel: +33 (0)1 45 68 18 76 Fax: +33 (0)1 45 68 55 70 E-mail: wh-info@unesco.org http://whc.unesco.org	**ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն** Ստեղծվել է 1992թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից և գործում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կառուցվածքում: Համակարգում է Համաշխարհային ժառանգությանն առնչվող բոլոր գործողությունները: Ղեկավարում է Կոնվենցիայի կատարման ընթացքը, կազմակերպում է Համաշխարհային ժառանգության կոմիտեի ամենամյա նստաշրջանները, ղեկավարում է Համաշխարհային ժառանգության ցուցակում գրանցման և անհապաղ օգնության տրամադրման ընթացակարգերը: Կենտրոնը միաժամանակ կազմակերպում է տեխնիկական սեմինարներ՝ աջակցելով Համաշխարհային ժառանգության վայրերի կառավարիչների որակավորման կատարելագործմանը և երիտասարդների ներգրավվածությանը Համաշխարհային ժառանգության պահպանության գործին: Վարում և պարբերաբար թարմացնում է Համաշխարհային ժառանգության տվյալների բազան:	

Թեմա 5

Մշակութային անշարժ ժառանգության պահպանության օրենսդրական շրջանակը Հայաստանի Հանրապետությունում

«Պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածության և պաշտպանության ներքո»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Գլուխ 1, Հոդված 11



Եթե պայմանականորեն ընդունենք, որ ժառանգությունը մի ամբող է, որը մենք ուզում ենք անառիկ պահել ամեն մի ոտնձգությունից, ապա այն պետք է պատնեշված լինի այս պատկերում նշված տարրերով.

1. **Օրենսդրական շրջանակ.** իրավունքներ և պարտավորություններ, որոնք լիազորում են մարդկանց և կազմակերպություններին գործել: Այդ մանդատի շրջանակում մշակվում է օրենսդրություն, որը սահմանում է «ժառանգություն» հասկացությունը, դրա կազմը, ինչպես նաև, պահպանության ու կառավարման համար անհրաժեշտ չափորոշիչներ:
2. **Ինստիտուցիոնալ կառուցվածք.** կազմակերպական և մեթոդական համակարգի հաստատում, որոնց շրջանակում կարելի է գործել օրենսդրության համաձայն:
3. **Ռեսուրսներ.** մարդկային, ֆինանսական և մտավոր ներդրումներ, որոնց միջոցով գործի են դրվում օրենսդրական շրջանակներում նախատեսված և ինստիտուցիոնալ կառուցվածքով հաստատված գործառույթների համակարգը և սահմանված ընթացակարգերը:

Անշարժ ժառանգության պաշտպանության ժամանակակից օրենսդրական շրջանակի ձևավորումը Հայաստանում

Ամեն մի երկիր ունի ժառանգության հայտնաբերման, հաշվառման, վավերագրման, պաշտպանության, պահպանության և հանրահռչակման իր համակարգը: Այդ համակարգը կարող է արտահայտվել գրված և չգրված (ավանդույթի ուժով սերնդեսերունդ փոխանցված) օրենքներով: Օրենսդրական համակարգը կարող է նաև իրենից ներկայացնել ազգային, տարածաշրջանային և միջազգային (ժառանգության պահպանության վերաբերյալ միջազգային կոնվենցիաների, խարտիաների և հանձնարարականների) օրենքների, այսպես կոչված, «համաձուլվածք»:

Իրավական փաստաթղթերի այն ամբողջությունը, որը վերաբերում է ժառանգության հաշվառմանը, վավերագրմանը, պահպանությանն ու պաշտպանությանը, կազմում է ժառանգության օրենսդրական շրջանակը: Ժառանգության օրենսդրությունը կարող է գործել տարբեր մակարդակներում՝ համայնքային, պետական, միջազգային: Սակայն որ մակարդակում էլ, որ այն գործի, պետք է ապահովի բավարար իրավական գործիքներ և կանոնակարգեր՝ ի պաշտպանություն ժառանգության: Հենց այդ օրենսդրական շրջանակն է յուրաքանչյուր պետության թույլ տալիս առանձնացնել այն, ինչը կարող է ժառանգություն համարվել, պահպանվել և փոխանցվել հաջորդ սերունդներին: Ժառանգության պահպանության արդյունավետությունը չափվում է օրենսդրական շրջանակի ամրությամբ:

Ժառանգության պահպանության մտահոգությամբ՝ դեռևս 1923թ. ակադեմիկոս Ալ. Թամանյանի նախաձեռնությամբ և Հայաստանի կառավարության հատուկ դեկրետով ստեղծվել է Հայաստանի Հնությունների և հուշարձանների պահպանության կոմիտե, որը ձեռնարկել է հանրապետության տարածքի մշակութային արժեքների հաշվառումը և սկսել այս ոլորտի բազմակողմանի ուսումնասիրությունը:[11] Արդյունքում, 1920-ականների վերջին ուրվագծվել է Հայաստանի հուշարձանների առաջին ցուցակը՝ բաղկացած 80 հնագիտական և ճարտարապետական արժեքներից, իսկ մեկ տասնամյակ անց՝ 1930-ականներին, Ցուցակն արդեն համալրված էր 300 հուշարձաններով:

Մշակութային անշարժ ժառանգության ժամանակակից սկզբունքները Հայաստանում ձևավորվել են 1970-ական թվականների կեսերին, երբ Խորհրդային Հայաստանի Կառավարության 1978թ. ապրիլի 18-ի որոշմամբ ստեղծվում է Հայաստանի Կառավարությանն առընթեր Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման

11 *Տե՛ս Գ. Գյուրջյան, Մշակութային ժառանգության պահպանության օրենսդրական հենքը Հայաստանում. կատարելագործման անհրաժեշտությունը, http://rcchd.icomos.org.ge/?l=E&m=4-4&JID=2&AID=13&l2*

վարչությունը, այնուհետև, սահմանվում են ոլորտի հիմնարար խնդիրներն ու գործունեության ուղղությունները: Այդ խնդիրների թվում կարևորագույնն, իհարկե, հուշարձանների ընդհանուր հաշվառումն ու վավերագրումն էր, ինչի արդյունքում 1983թ. Հայաստանի կառավարությունը հաստատեց Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակը՝ 8865 միավոր հուշարձաններով: Վերջինս մինչև 2000թ. համարվում էր Հայաստանի անշարժ ժառանգության ամենից ամբողջական ցանկը:

Խորհրդային Միության կազմալուծումը քաղաքական և տնտեսական մեծ փոփոխություններ առաջացրեց նաև Հայաստանում: Եվ, թեև բավականին անբարենպաստ համատեքստում, անկախ Հայաստանի Կառավարությունը հստակորեն կողմնորոշվեց դեպի ազգային ինքնությունից բխող մշակութային քաղաքականություն՝ չանտեսելով այս բնագավառի միջազգային փորձն ու մոտեցումները: Շրջակա միջավայրի, պատմության ու մշակույթի հուշարձանների և մշակութային այլ արժեքների պահպանությունը ՀՀ Սահմանադրությունը հռչակեց որպես պետական պարտավորություն *(ՀՀ Սահմանադրություն, Գլուխ 1, Հոդված 11)*:

Գլխավոր օրենքը, որով Հայաստանի Հանրապետությունում պահպանվում է մշակութային անշարժ ժառանգությունը, Հայաստանի Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. և գործողության մեջ է մինչ օրս:[12] Օրենքի ամբողջական անվանումը հետևյալն է՝ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենք»: Այդ օրենքի հիման վրա մշակվել է դրա կիրառման կարգը, որը 2002թ. հաստատվել է ՀՀ Կառավարության կողմից:[13]

Անշարժ ժառանգության բնագավառի օրենսդրական դաշտի կարգավորման առումով շատ կարևոր մեկ այլ օրենք՝ «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին ՀՀ օրենքը», Հայաստանի Ազգային ժողովն ընդունեց 2003թ.:[14]

Մշակութային և բնության ժառանգության պահպանության վերաբերյալ հոդվածներ կան նաև ՀՀ քաղաքացիական, քրեական և վարչական օրենսգրքերում, տարածքային պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքներում:

12 ՀՀ ՕՐԵՆՔԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ , տես www.arlis.am,

13 «Կարգ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման», ՀՀ Կառավարության թիվ 438 որոշում առ 20.04.2002թ.

14 ՀՀ ՕՐԵՆՔԸ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, , տես www.arlis.am.

Մայր օրենքի մի քանի հոդվածներ, որոնք մատչելի պետք է մեկնաբանել դասարանում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունված է Ազգային Ժողովի կողմից
11 նոյեմբերի 1998թ.

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ (այսուհետ՝ հուշարձաններ) են պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հուշարձանները գտնվում են պետության պահպանության ներքո:

Հոդված 4. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի օբյեկտներն են՝

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հուշարձաններն իրենց պահպանական գոտիներով, դրանց շրջապատող պատմական միջավայրը՝ կառուցապատումը, բնական կամ արհեստական լանդշաֆտը:

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հայ ժողովրդի պատմամշակութային հուշարձանների պահպանությունն իրականացվում է այդ երկրի օրենսդրության, միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում:

Հոդված 5. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի սուբյեկտներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

բ) պետական կառավարման հանրապետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները.

գ) հուշարձանների սեփականատերերը, օգտագործողները.

դ) հուշարձանների պետական հաշվառման, պահպանման, ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման հետ առնչվող իրավաբանական ու ֆիզիկական անձինք:

Հոդված 7. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ, ՌԱՍԱՅԱԿԱՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՈՒՄԸ

Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում արգելվում է քաղաքական, գաղափարախոսական, կրոնական, ռասայական ու ազգային խտրականությունը:

Երևանի Կապույտ մզկիթը, 1766թ., վերանորոգված՝ 1994-1998թթ.

Լուսանկարը՝ Մ. Բաղդասարյանի



Սբ Թադեի վանքը՝ վերականգնված Իրանի Իսլամական Հանրապետության կողմից

Լուսանկարը՝ Վ. Առաքելյանի

Ջուղայի պատմական գերեզմանատունը ավերումից առաջ և հետո
Լուսանկարները՝ http://www.international.icomos.org/risk/2002/azerbaijan2002.htm#

2008թ. Կանադայի Քվեբեկ քաղաքում գումարված ԻԿՕՄՕՍ-ի 16-րդ Գլխավոր ասամբլեան ընդունել է Ջուղայի պատմական գերեզմանատան ավերումը միջազգայնորեն դատապարտող բանաձև, որը Գլխավոր ասամբլեային էր ներկայացվել «ԻԿՕՄՕՍ/Հայաստան» կազմակերպության կողմից:

Բանաձև 5

Ջուղայի պատմական գերեզմանոցի ավերումը (Ադրբեջան, Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն)

Ջուղան Հայաստանի անկրկնելի բնակավայրերից է, արհեստների ու առևտրի կենտրոն՝ պատմական ժամանակներից ի վեր: 15-16-րդ դարերում այն հռչակված էր որպես ավանդական ճարտարապետության,

վիմագրության, գրչության, թանկարժեք քարերի մշակման և կարպետագործության կենտրոն: Հազարավոր խաչքարերից բաղկացած Ջուղայի պատմական գերեզմանոցը, ուշագրավ որպես պատմության հուշարձան, ջուղայեցի քարգործ վարպետի շինարարական և գեղարվեստական տաղանդի վկայությունն էր:

Հաշվի առնելով այն, որ վերջին տարիներին պատմամշակութային ժառանգությունը հանդիսացել է պատերազմների, միջէթնիկ ընդհարումների և քաղաքական լարումների զոհ, այս հնավայրը, որ իր արժանի տեղն էր զբաղեցնում համաշխարհային ժառանգության գանձարանում, այլևս չի կարող փոխանցվել ապագա սերունդներին:

Նկատի առնելով այն, որ չնայած ժառանգության պահպանությանն ուղղված միջազային ջանքերին, մասնավորապես վտանգված ժառանգության վերաբերյալ ԻԿՕՄՕՍ-ի կողմից ձեռնարկած միջոցներին, ինչպես նաև հաշվի առնելով սահմաններից դուրս գտնվող ժառանգությունների վերաբերյալ ԻԿՕՄՕՍ-ի 15-րդ Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված հանձնարարականը և նմանօրինակ դեպքերի կրկնությունից խուսափելու նպատակով՝

2008թ. հոկտեմբերին Քվեբեկում գումարված ԻԿՕՄՕՍ-ի 16-րդ Գլխավոր ասամբլեան որոշում է.

- Որպես Մշակութային և բնության ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայի կողմ-պետության՝ ադրբեջանական իշխանությունների ուշադրությունը հրավիրել Ջուղայի պատմական գերեզմանոցի ավերման վրա և նրանց տեղեկացնել ժառանգության պահպանությամբ զբաղվող միջազգային փորձագետների մտահոգությունը
- Դիմել ադրբեջանական իշխանություններին՝ դյուրացնելու ՅՈՒՆԵՍԿՕ-ի և / կամ ԻԿՕՄՕՍ-ի միջազգային փորձագետների պատվիրակության մուտքը հնավայր՝ այն ուսումնասիրելու և միջազգային հանրությանը արդյունքների մասին տեղեկացնելու նպատակով:

Տե՛ս http://www.international.icomos.org/quebec2008/resolutions/pdf/GA16_Resolutions_final_EN.pdf

Հոդված 11. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինները՝

ա) սահմանված կարգով կազմում են բնակավայրի պատմամշակութային հիմնավորման նախագիծը

բ) աջակցում են պետական սեփականություն համարվող և չօգտագործվող հուշարձանների պահպանությանը

գ) սահմանված կարգով կազմակերպում են տեղական նշանակության հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքները

դ) հանրապետական նշանակության հուշարձանների նկատմամբ իրականացնում են պետության կողմից պատվիրակված լիազորությունները

ե) օրենսդրությամբ սահմանված կարգով կասեցնում են շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքները, եթե դրանք վտանգում են կամ կարող են վտանգել հուշարձանի ու դրա պահպանական գոտու անվթարությունը և այդ մասին տեղեկացնում լիազորված մարմնին

զ) լիազորված մարմնի համաձայնությամբ օգտագործման կամ վարձակալության կարող են հանձնել համայնքի սեփականություն համարվող հուշարձան-շենքերը և շինությունները

է) շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքների կատարման ժամանակ հուշարձաններ հայտնաբերելիս՝ կասեցնում են այդ աշխատանքներն ու այդ մասին անհապաղ հայտնում լիազորված մարմնին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով

ը) ապահովում են համայնքի տարածքում գտնվող հուշարձանների պահպանական գոտիներում սահմանված հատուկ ռեժիմի պահանջների կատարումը

թ) հուշարձանների պահպանական գոտիներում հողի, համայնքի սեփականություն համարվող հուշարձան-շենքերի և շինությունների սեփականատերերի և օգտագործողների հետ կնքում են հուշարձանների պահպանության պայմանագիր (պարտավորագիր), որի մեկ օրինակը ներկայացնում են լիազորված մարմնին:

Հոդված 23. ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների իրավաբանական ու ֆիզիկական անձինք՝ իրենց անմիջական մասնակցությամբ, նախաձեռնությամբ, հովանավորությամբ, նվիրատվությամբ, ֆինանսական և նյութատեխնիկական օգնությամբ կարող են աջակցել հուշարձանների հայտնաբերման, պետական հաշվառման, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման աշխատանքներին, կարող են ներկայացնել և քննարկման դնել բնագավառի վերաբերյալ մասնակի կամ համալիր առաջարկներ, ծրագրեր:

Ապրիլի 18՝ Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օր

International Council on Monuments and Sites
Conseil International des Monuments et des Sites

Հավանության արժանացնելով Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդի (ԻԿՕՄՕՍ) առաջարկը՝ 1983թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ն ապրիլի 18-ը հռչակեց **Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օր**: **Ապրիլի 18-ի** նպատակն է՝ բարձրացնել ժառանգության բազմազանության նկատմամբ հասարակության զգայականությունը և համախմբել ժառանգության պահպանությանն ուղղված ժառանգության պահապանների ու ողջ հասարակության ջանքերը: Օրը նաև պատեհ հնարավորություն է ընձեռում՝ հասարակության ուշադրությունն ուղղելու դեպի ժառանգության վտանգված ու խոցելի օրինակները:

ԻԿՕՄՕՍ-ն առաջարկում է **Ապրիլի 18-ը** նշանավորել ամենաբազմազան ձևերով: Սակայն, ինչպես էլ որ այն նշվի, ապրիլի 18-ը նպատակ ունի ի ցույց դնել աշխարհի ժառանգության պահապանների և հասարակությունների միջազգային համախմբվածությունը և համերաշխությունը՝ հանուն ժառանգության պահպանության:

Սիրելի ուսուցի՛չ, Դուք ևս կարող եք կազմակերպել[15].

ա) Այցելություններ

Հատուկ այցելություններ դեպի հուշարձաններ և տեսարժան վայրեր՝ Ձեր աշակերտների, նրանց ծնողների, Ձեր շրջանավարտների, ժառանգության պահապանների մասնակցությամբ:

բ) Իրազեկման գործողություններ

Ապրիլի 18-ի գովազդ դպրոցում. դպրոցի գլխավոր ճակատին, գրադարանում, բուֆետում համապատասխան գրությամբ պաստառների տեղադրում, որը կհիշեցնի, **որ ապրիլի 18-ը Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանության միջազգային օրն է** և կգրավի բոլորի ուշադրությունը:

գ) Միջոցառումներ

- հանդիպում ժառանգության պահապանների հետ
- Քննարկում դասարանում՝ ժառանգության պահպանության խնդիրների շուրջ
- Հուշարձանների լուսանկարների և/կամ գեղանկարների ցուցահանդեսների և/կամ մրցույթների կազմակերպում և լավագույն աշխատանքների խրախուսում:

15 Նույն գործողությունները կարելի է իրականացնել նաև միջազգային մյուս նախաձեռնությունների օրերին:

Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվա յուրաքանչյուր տարվա միջոցառումների ծրագիրը ՀՀ մշակույթի նախարարությունը նախօրոք զետեղում է իր պաշտոնական վեբ-կայքում՝ www.mincult.am

Զննի՛ր կայքը, այցելի՛ր հուշարձաններ,
քո ներկայությամբ նոր շունչ պարգևի՛ր մեր ժառանգությանը:

Մայիսի 18՝ Թանգարանների միջազգային օր և Թանգարանների եվրոպական գիշեր

Թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՄ) կողմից 1977 թվականից **Մայիսի 18-ը հաստատվել է որպես Թանգարանների միջազգային օր**: Օրվա գլխավոր խորհուրդը լայն հասարակության շրջանում թանգարանների դերի խթանումն է և դրանց կարևորության գիտակցումը՝ հասարակության զարգացման գործում:

Թանգարանները մշակութային փոխանակությունների, մշակույթների փոխադարձ հարստացման, ժողովուրդների միջև փոխըմբռնման, համագործակցության և խաղաղության հաստատման կարևոր միջոց են: Հասարակությանը ոչինչ այնքան չի միավորում իր ժառանգության շուրջ, որքան թանգարանները:

Մայիսի 18-ը թանգարանների հանրությունը նշում է հատուկ միջոցառումներով և ցուցահանդեսներով՝ հայտարարելով «Բաց դռների օր» և անվճար մուտք բոլոր այցելուների համար:

Ուրեմն ինչո՞ւ չայցելել աշակերտների հետ և չհանդիպել մեր թանգարաններում պահվող շարժական ժառանգության անկրկնելի օրինակներին:

Մայիսի 18-ի համատեքստում (մայիսի 18-ին նախորդող կամ հաջորդող շաբաթ օր) 2005 թվականից իրականացվում է նաև «**Թանգարանների եվրոպական գիշեր**» նախաձեռնությունը, որը շատ թանգարանների օգնում է դուրս գալ մեկուսացումից և, ի տարբերություն սովորական օրերի, ընդունել մեծաթիվ այցելուների: Այդ օրը մուտքը թանգարաններ անվճար է, և թանգարաններն աշխատում են մինչև կեսգիշեր: Թանգարաններից շատերն ուղղակի վերածվում են բեմահարթակների:

Թանգարանների միջազգային օրվա և Թանգարանների եվրոպական գիշերվա յուրաքանչյուր տարվա միջոցառումների ծրագիրը ՀՀ մշակույթի նախարարությունը նախօրոք զետեղում է իր պաշտոնական վեբ-կայքում՝ www.mincult.am

Զննի՛ր կայքը, այցելի՛ր թանգարաններ, դարձի՛ր անմոռանալի
միջոցառումների մասնակից:

Եվրոպական ժառանգության օրեր

1984թ. առաջին անգամ Ֆրանսիայում անցկացվեց «Պատմական հուշարձանների բաց դռների օրեր» խորագիրը կրող նախաձեռնությունը, որի առաջնային նպատակն անվճար այցելություններն էին պատմական հուշարձաններ և վայրեր: Մեկ տարի անց, 1985թ. հոկտեմբերին, Գրենադայում (Իսպանիա) գումարված Եվրոպայի խորհրդի ճարտարապետական ժառանգության պատասխանատու նախարարների երկրորդ կոնֆերանսը հավանության արժանացրեց այս ձեռնարկը. եվրոպական շատ երկրներ անմիջապես միացան նախաձեռնությանը: 1991 թվականից Եվրոպայի խորհուրդը պաշտոնապես հաստատեց այն՝ «Եվրոպական ժառանգության օրեր» անվանումով: 1999 թվականից Օրերին միացել է նաև Եվրամիությունը, և այն համարվում է Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության համատեղ ձեռնարկ:

Ճանաչի՛ր Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության տարբերանշանները,

Պատմի՛ր աշակերտներին այդ կառույցների մասին:

Եվրոպական ժառանգության օրերը կազմակերպվում են Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր երկրներում, սովորաբար սեպտեմբեր ամսվա որևէ հանգստյան օր (օրեր): Ամեն մի երկիր ինքն է որոշում Օրերի անցկացման իր ժամանակացույցը, ինչպես նաև, այն խորագիրը, որի ներքո անցկացվելու են միջոցառումները: Եվրոպական ժառանգության օրերը պատեհ հնարավորություն են նաև դպրոցականների համար՝ այցելել պատմական հուշարձաններ, տեսարժան վայրեր, բարձրացնել հայրենի ժառանգության սեփական ճանաչելիությունը և ամրապնդել այն պահպանելու գիտակցությունը: Անշուշտ ցանկալի է, որ այցելություններին հաջորդեն քննարկումներ արդեն դասարանում՝ տարվա խորագրի համատեքստում:

Դառնալով Եվրոպական ժառանգության օրերի մասնակից՝ մենք կանգնում ենք Եվրոպայի միլիոնավոր քաղաքացիների կողքին և հաստատում ենք մեր պատկանելությունը Եվրոպային և եվրոպական մշակույթին:

Եվրոպական ժառանգության օրերի ժամանակացույցը և ծրագիրը ՀՀ մշակույթի նախարարությունը նախօրոք զետեղում է իր պաշտոնական վեբ-կայքում՝ www.mincult.am

Զննի՛ր կայքը, այցելի՛ր հուշարձաններ,
կանգնի՛ր մշակույթի Եվրոպայի կողքին:

Ուսուցողական սեմինարները լուսանկարներում

WH ARMENIA

Օգտակար գրականության և հղումների ցանկ

1. Managing Cultural World Heritage, Published in November 2013 by UNESCO, ISBN 978-92-3-001223-6
2. Managing Natural World Heritage, Published in June 2012 by UNESCO, ISBN 978-92-3 001112-3
3. Serge Grappin, Du patrimoine local aux classes européennes du patrimoine, III Seminari Arqueologia i Ensenyament, Barcelona, 16-18 de novembre, 2000, Treballs d'Arqueologia, 6 (2000): 6-13
4. Les outils pédagogiques des Villes et Pays d'Art et d'Histoire : analyse de 54 outils de sensibilisation à l'architecture et au patrimoine, CRDP ACADEMIE D'AIX-MARSEILLE, 2005
5. Heritage and Education: A European Perspective, Proceedings of the Europa Nostra Forum, The Hague, 2 1 October 2004
6. Guide de l'enseignante : Projet de sensibilisation au patrimoine pour les élèves du troisième cycle du primaire de l'école Sainte-Geneviève, Québec, 2009
7. Introducing Young People to the Protection of Heritage Sites and Historic Cities, A Practical Guide for School Teachers in the Arab Region, UNESCO-ICCROM
8. Maud Salançon, Le Patrimoine Industriel, Promenade ludique dans le patrimoine industriel du bassin stéphanois, France
9. La sensibilisation des Jeunes au Patrimoine, Guide méthodologique no 2, Alliance des villes européennes de Culture
10. Classes européennes du patrimoine, Conseil de l'Europe, Actes de Colloque, Château de Maisons-Laffitte, 7-9 octobre 1992
11. Нормативные и практические меры по охране культуры, справочник ЮНЕСКО, Алматы, 2008
12. Богуславский М.М, Международная охрана культурных ценностей, Москва 1979
13. Защита культурных ценностей в случае вооруженного конфликта, Москва, 2005
14. Գ. Սարգսյան, Պատմամշակութային հուշարձանների պահպանության հիմունքներ, Երևան, 2005
15. Միավորված ազգերի՝ Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության շրջանակներում կնքված միջազգային իրավական փաստաթղթեր, Ե. 2000

www.unesco.org
www.iccrom.org
www.icomos.org
www.coe.int

Նշումների համար

Նշումների համար

Նշումների համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբանի փոխարեն 7

Թեմա 1 9

Ի՞նչ է ժառանգությունը և ինչո՞ւ այն պահպանել

Թեմա 2 28

Ինչպե՞ս կազմակերպել այցելություն ժառանգության վայրեր

Թեմա 3 39

Գյուղական ժառանգություն. ինչպես ճանաչել և արժևորել

Թեմա 4 60

Համաշխարհային ժառանգություն. իմ երկիրը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցուցակում

Թեմա 5 91

Մշակութային անշարժ ժառանգության պահպանության օրենսդրական շրջանակը Հայաստանի Հանրապետությունում

Օգտակար գրականության և հղումների ցանկ . . 106

«ԻԿՕՄՕՍ/Հայաստան» կազմակերպությունը

շնորհակալություն է հայտնում

Երևանի քաղաքապետարանի «Էրեբունի»
պատմահնագիտական արգելոց-թանգարանին՝
ԵՄ Արևելյան գործընկերության ՄՇԱԿՈՒՅԹ ծրագրով
2012-2014թթ. Հայաստանում իրականացված
«Տարածաշրջանային համագործակցություն հանուն
մշակութային ժառանգության զարգացման» նախագծին ցուցաբերած
տեխնիկական, կազմակերպական և
մասնակցային աջակցության համար:

Հատուկ շնորհակալություն՝

ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը՝
տեղական կառավարման մարմինների ներկայացուցիչների համար
իրականացված սեմինարների կազմակերպմանը ցուցաբերած
աջակցության համար:

ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝
դպրոցների ուսուցիչների համար իրականացված սեմինարների
կազմակերպմանը ցուցաբերած աջակցության համար:

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց թանգարանի
գիտաշխատող Միքայել Բաղալյանին՝ հնագիտական ժառանգության
վերաբերյալ ուսուցողական սեմինարների դասանյութի մշակման և
վարման համար:

«Ֆոտոլուր» գործակալության տնօրեն Մելիք Բաղդասարյանին՝
համագործակցության և լուսանկարների տրամադրման համար:

Բոլոր այն ուսուցիչներին, ովքեր փորձում են իրենց աշակերտներին
տալ մշակութային ժառանգության և դրա պահպանության վերաբերյալ
տարրական գիտելիքներ ու մեր գալիք սերնդին դաստիարակել
ժառանգության պահպանության գիտակցության ոգով:

ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ

ՕԺԱՆԴԱԿ ՁԵՌՆԱՐԿ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Նախագծի գլխավոր համակարգող՝
Գագիկ Գյուրջյան

Խմբագիր՝ Հասմիկ Ազիզյան
Ձևավորումը՝ Արամ Ուռուտյանի
Սրբագրեց՝ Գոհար Գևորգյանը

Սույն հրատարակությունը ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից: «ԻԿՕՄՕՍ/Հայաստան» կազմակերպությունը պատասխանատու է բովանդակության համար և այն ոչ մի կերպ չի կարող արտահայտել ԵՄ պաշտոնական տեսակետը:

This publication is financed by the European Union. “ICOMOS/Armenia” organization is responsible for the content of this publication and can in no way be taken to reflect the views of the EU.